ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

եւ յաւելուած դաստիարակների համար

XVII ՏԱՐԻ № 2 ՓԵՏՐՈՒԱՐ 1899 թ.

* *
*

**Սուիր, մարտնչիր,
մինչեւ վերջին շունչ
բայց հոգով մնա**

արի անվեհեր-մեռիր դու ազ-
նիւ... ոչ հարուստ ստոր այլ
ազնիւ մարդիկ քեզ հետ են
ընկեր... Սուրբ, մարտնչիր մին-
չեւ վերջին շունչ:

ԱՐԾԻՒԿ

(Խօանս Լի-ի զրոյցներից)

Այնտեղ հեռո՜ւ, շատ հեռու, որտեղ լեռները վիթխարի բարձրութեամբ կանգնած են հպարտ, որոնց վրայ երկինքը ձգել է ու ձգում է իր մանուշակագոյն սուսերը, որտեղ լեռան գագաթները ու սառցակոյտները պսպղում են հրաշալի մանուշակագոյն կայծերով, այնտեղ, հեռու մարդկանցից, հեռու ամբոխի աղմուկից ու շշուկից, բոյն էր շինել արծիւը։ Անտառապատ հովիտները միայն, որոնց միջով վազում էին աղմկայոյզ վտակներ, նրանք միայն կտրում էին այն բարձրաբերձ լեռների սիրտը, որ հետզհետէ նեղանալով ու վերջը բոլորովին անհետանալով՝ կորչում էին հեռու հորիզոնում։

Առաւօտեան արշալոյսին, երբ արծիւը թափահարելով օդում իր հզօր թեւերը, թռչում էր

Այս զրոյցը տպւած էր „Русскія Вѣдомости“ թերթի 1898 թւի յուլիսի 23-ի համարում։

դէպի այս կողմերը, ուր մարդու աչքը անկարող է բան նկատել իր թոյլ զօրութեամբ, նա, սրատես արծիւը հետեւում էր և պարզ տեսնում դաշտում երևացող ամենափոքր մկանն անգամ։ Նա տեսնում էր, թէ ինչպէս անհոգ այծեամը, ուրախ ու զւարթ թռչկոտում էր ցօղի վրայից և յետոյ յանկարծ նազիկ ոտքերով բարձրանում էր դէպի անուելի բարձրութիւնները։ Նապաստակը նստած, շոյում էր իրան, լիզելով մազերը, թաթիկներով էլ տրորում էր աչքերը. յանկարծ սթափւելով նայում էր ներքև, և շուրջը գտնւող եօթն գիւղերը, զանգակատան կատարները նրան անհուն խորութեան մէջ էին երևում։

Շատ անգամ, հզօր արծիւը, որսի յետևից ընկնելով, հարիւրաւոր մղոններ էր թռչում՝ քարքարուտ անապատների, մռայլ ու սարսափելի անդունդների ու մոխրագոյն մամուռով ծածկւած դաշտերի վերևից։

Իսկ հեռու արևմուտքում երևում էին մէկը միւսի յետևից շարւած լեռնաշղթաներ։ Սրանք բնական սահման էին կազմում երկու հզօր տէրութիւնների մէջ. այստեղ երկար տարիներից ի վեր միահեծան իշխում էին այս արծւի նախնիքը։ Շատ անգամ, իրան ցեղակից արքայազուններից մէկին կամ միւսին հեռացնելու հա-

մար՝ իր տէրութեան սահմաններից, կռիւ էր մղում և ինքը։ Այն ժամանակ տեղի էր ունենում մի սարսափելի կռիւ. արիւնոտ փետուրները անձրևի շիթերի նման, տատանուելով օդում, ցած էին թափւում շարունակ, մինչև որ նրանցից մէկը անշնչացած ընկնում էր ներքև՝ դաշտ կամ հովիտ։

Մի անգամ արծիւը, իր բնից հարիւրաւոր մղոններ հեռու տեղերից, քարքարոտ անապատները կտրելով, առաւօտեան որսից տուն էր յետ դառնում, նորածին այծեամը ճանկերում սեղմած։ Երբ նա իջնում էր դէպի իր բոյնը, յանկարծ թափահարեց թևերը և նրա վայրենի ու սուր աղաղակի արձագանքը բռնեց ամբողջ անդունդը իր կրկնակի ձայնարկով։ Այն հսկայական ճիւղերը, որոնք նրա բնին իբրև հիմք էին ծառայում, այժմ ծածկուած էին կեղտոտ, արիւնոտ ու փետրախառն մամուռով և կախուած էին ժայռի ցցուածքից։ Բոյնն աւերակ էր և կողոպտուած։ Փոքրիկ արծուիկը, որ նոր սկսել էր փորձել թևերի ոյժը և վարժեցնել կտուցը և ճանկերը աւելի մեծ որսերի վրայ—չէր երևում։ Այն ժամանակ արծիւը սլացաւ և բարձրանում էր վեր ու վեր, մինչև որ դադարեց նրա աղաղակի արձագանքը առանձնացած ժայռերի և անհուն ան-

դունդի մէջ։ Արծիւը սրատես աչքերով դիտում էր շուրջը, յետ ու առաջ տատանուելով։

Այնտեղ ներքևը — դաշտում, անտառից երկու որսորդ տուն էին վերադառնում։ Յանկարծ նրանց վերեւը մի ինչ-որ ձայն լսեց։ Որսորդներից մէկը ուռենու ճկուն ոստերից հիւսած զամբիւղ ուսին դրած տանում էր, մէջը՝ բռնած արծուիկը։ Մինչդեռ որսորդները մղոն մղոնի ետեւից թողնելով, արագ քայլերով առաջ էին գնում, արծիւ-մայրը հետեւելով նրանց օդային բարձրութիւնից, թռչում էր նոյն ուղղութեամբ թափանցիկ, կապոյտ ամպերի միջից։ Արծիւը տեսնում էր, թէ ինչպէս որսորդների տուն հասնելուն պէս, հաւաքուեցան տանու մեծերն ու փոքրերը — դուրսը բակում, ուռենու ոստերից հիւսուած զամբիւղի շուրջը։

Արծիւ-մայրը ամբողջ օրը պտտում էր այն բակի շուրջը։ Երբ արդէն տիրեց երեկոյեան մռայլ խաւարը, — Նա ցած իջաւ օդային բարձրութիւնից մինչև այն տան ծխնելոյզի խողովակը և մարդիկ, երեկոյեան խաւարի միջից մի ինչ-որ տարօրինակ ու անախորժ ձայն լսեցին տանիքի վերեւից։ Առաւօտեան վաղ, շատ վաղ, երբ արշալոյսին, արեւը սկսեց ոսկեզօծել շրջակայքը,

արծիւը նորից բարձրացաւ վերև, չհեռացնելով հայեացքը գիւղացու բակից։

Նա տեսնում էր, թէ ինչպէս գիւղացու մեծ որդիները, բակի դռների առաջ փայտ էին կոտրում ու տաշում, և թէ ինչպէս փոքր մանուկներն էլ կանգնած՝ նայում էին նրանց աշխատանքին։ Փոքր ինչ յետոյ տանից դուրս բերին մի մեծ վանդակ, դրին բակի մէջտեղը. վանդակի ցանկապատի արանքներից արծիւը պարզ էր որոշում իր արծւիկին, տեսնում էր թէ ինչպէս վերջինս այս ու այն կողմ ընկնելով, թափահարում էր թևերը, անընդհատ խփում կտուցով ցանցապատին, ազատուելու հնար որոնելով։

Վանդակը այժմ առանձին է, մարդ չըկայ մօտը, չուրջը ոչ ոք չի երևում։ Արևը հետզհետէ վեր է բարձրանում և իր կիզիչ ճառագայթներով այրում երկիրը։ Սաստիկ շոգ է։ Արծիւը հանգիստ չունի. նա սլանում է ամպերից վեր ու հետևում ձագուկի ամեն մի շարժումին։

Այժմ, երբ օրը մօտենում է իր վախճանին, և արևը թեքւում է միւս կողմը, բակում երեւացին երեխաները և սկսեցին ուրախ ու զըւարթ խաղեր խաղալ։ Հասակաւորներից մի քանիսը նոյնպէս դուրս եկան փողոց և սկսեցին

սովորական աշխատանքը: Խաղաղ երեկոյ էր: Գիւղացու ջահիլ հարսներից մէկը դուրս բերեց մանկանը բարուրում փաթաթած, դրեց կանաչ մարգի վրայ և ինքը սկսեց ջրհորի մօտ լուացքը մաքրել: Սրահի ցանկի վրայ ճռւողում էին երկու ուրախ կաչաղակներ, որոնք բոյն էին շինել խրճիթին մօտիկ գտնւող սօսենու ճիւղերի վրայ: Ներքևը— գետնի վրայ ցատկոտում էին ծւծւալով մի քանի ճնճղուկներ, սրահի դրան մօտ թափթփւած հատիկները կտցահարելով:

Յանկարծ օդում կայծակի արագութեամբ, մի ստւեր սլացաւ: Տիրող լռութեան միջից լսւեց հզօր թևերի ձայնը և տարօրինակ թշշոց:

Երբ ջահել կինը լսելով ձայնը, շտապելով յետ նայեց, այն ժամանակ տեսաւ մարգի վերևից բարձրացող վիթխարի արծւին: Սարսափահար, վեր թռչելով ոտի կանգնեց: Գիշակեր թռչունը բռնել էր ճանկերում նրա մանկանը. կինը յարւած հայեացքով, մի ակնթարթում նկատեց անսահման տարածութիւնը, որ մանկան բաժանում էր երկրից:

Վայրենի ու արտակարգ սարսափը ոգևորեց մօրը: մօտ վազեց վանդակին, դուրս քաշեց այնտեղից արծւիկին: Արծւիկը սուր-սուր ճանկերով ճանկռոտում էր խեղճ կնոջ ձեռքերն ու

գլուխը, բայց կինը ճիչ-աղաղակով, սեղմել էր նրան երկու ձեռքերով և վեր էր բարձրացնում։

Արծիւ-մայրը մի րոպէ կանգ առաւ օդում և ամեն անգամ, երբ թափահարում էր թևերը իր դրութիւնը օդում պահելու համար, կինը պարզ որոշում էր մանկանը, որ բարուրում փաթաթած, որդի նման կախուած էր գիշատիչ թռչունի ճանկերից։

Եւ յանկարծ, կարծես թէ սկսեց իջնել արծիւը—օդային բարձրութիւնից. կինը շունչն իրան քաշեց և հետևում էր։ Իսկապէս, արծիւը իջնում էր դէպի մարգը. կինը չհամբերեց, բայց թողեց արծւիկին և խելագարի նման մօտ վազեց մանկանը։

Յուսահատութեան այս րոպէին, երկու մայրերը բնազդմամբ հասկացան իրար։

Միայն, երբ արծիւը, թողնելով մանկանը վեր էր բարձրանում, գիւղացու խրճիթի դռնից հրացանի ճայթիւն լսուեց և ահարկու կենդանին անշնչացած, լայն բացած թևերով գետին ընկաւ. այն ինչ ազատուած արծւիկը, համարձակ թափահարելով թևերը, անհետացաւ անտառի ծառերի յետևը։

Ս. Խանոյեան

ԱՆՈՒՇ ԼՈՒՍԸՆԿԱՅ

«Անուշ լուսընկայ, այդպէս տրտըմած
Ո՛ւր կ'արշաւես, ըսէ, ա՛խ ո՞ւր.
Գոնէ մէ՛կ անգամ երեսդ չըխնդաց
Ինչո՞ւ այդչափ ըլլաս տխուր:

Կ'ելլես ու կիջնես ամպոց լեռներէն,
Քուն եւ դադար դուն չես գիտեր.
Ա՛խ ի՞նչ կըփնտռես, աղջկո՞ւնքդ կորեր են,
Ինձ կերեւիս մեծ վէրքի տէր:»

— «Մանուկ քննասէ՛ր, գոհ եմ, չեմ ցաւած.
Բայց տառապեալ տկար մարդուն
Արցունքն հաշւելու համար Հայր Աստուած
Զիս եւ քոյրերս պահէ արթուն»:

«Անուշ լուսընկայ, ճիշտ հոն, քիչ
մ՚հեռուն
Չորս որբեր կան մ՚ութ յարկի տակ.
Կուլայ հիւանդ մայրն այդ խեղճ
որբերուն,
Ո՛չ հաց ունենն եւ ո՛չ ստակ»:

---«Քիչ վերջ հոն կերթամ անոնց այդ
հալած
Դէմքին տալու քաղցր սփոփանք.
Դուն ալ շուտ տար հոն ստակ, քիչ
մ՚ալ հաց,
Որ անոնց հետ մէկ տեղ խնդանք,:

Ց. Թ. Գայայեան

ԱՐԱԲՆ ՈՒ ՕՁԸ

(Արեւելեան զրոյց)

—

Մի արաբ գնում էր ձիով աւազուտ անապատի միջով, ձեռին բռնած մի երկար նիզակ: Ճանապարհի մօտ նա տեսաւ մի խարոյկ, որ արդէն վառւում էր, իսկ բորբոքուած ածուխների վրայ ոլորւում ու թշթշում էր մի օձ: Օձը տեսաւ արաբին թէ չէ սկսեց խնդրել.

—Օգնիր ինձ, ազատիր մեռնելուց:

Արաբը խղճաց օձին ու մեկնեց նրան իր նիզակը: Օձը նիզակի վրայով վեր սողաց, նիզակից բարձրացաւ արաբի ձեռքը, փաթաթուեց նրա վզովն ու սկսեց խեղդել:

—Ի՞նչ ես անում, հազիւ շշնջաց արաբը:

—Մի՞թէ չես զգում թէ ինչ եմ անում, — պատասխանեց օձը, — ես ուզում եմ քեզ խեղդել:

— Ախր ինչո՞ւ համար, չէ որ ես քեզ դաժան մահւանից փրկեցի։

— Այդ այդպէս է, բայց երկրիս վրայ ո՞վ բարութեան փոխարէն չարութիւն չի հատուցանում։ Ահա ես էլ նոյնն եմ անում։

—Չէ, օձ, ամենքը այդպէս չեն անում։ Դու միայն այդպէս անիրաւութեամբ ես ապրում, ասաց արաբը։

—Չէ, մենակ ես չեմ. այլ ամենքը, փշշաց օձն ու սկսեց աւելի ուժով խեղդել արաբին։

—Թ՛ող կոկորդս, սկսեց աղաչել արաբը,— լսի՛ր, ինչ եմ ասում։

Օձը մի փոքր թուլացրեց։

—Հարցնենք երեք հոգու. ասաց արաբը, թէ ճշմարի՞տ է քո ասածը. եթէ բոլորն էլ նոյնն ասեն՝ այն ժամանակ արդէն ինչ ուզում ես՝ արա ինձ։

—Է, լաւ, նայենք փշշաց օձը։

Գնացին։ Օձն այնպէս պինդ էր փաթաթուել արաբի վզովը, որ խեղճը հազիւ էր շնչում։ Ահա նրանք մօտեցան մի աղբիւրի ու կանգնեցին։

—Լսի՛ր, մաքուր ջուր, ասաց արաբը։ Ես այս օձին ազատեցի կրակից, իսկ նա շնորհակալութեան փոխարէն ուզում է ինձ խեղդել։ Նա ասում է, որ աշխարհումս միշտ բարութեան փոխա-

րէն չարութիւն են հատուցանում, ճշմարի՞տ է այդ։

— Ճշմարիտ է. պատասխանեց աղբիւրը. նա- յի՛ր ահա, իմ ջուրս մաքուր է ու յստակ. գալիս են ինձ մօտ մարդիկ ձիերով և ուղտերով, ես նրանց բոլորին ջրում եմ պարզ ու մաքուր ջը- րով։ Առանց ինձ նրանք պիտի մեռնէին այս անջուր տափ անապատում։ Բայց մարդիկ ինչ են անում. երբ գնում են՝ լցնում են ջուրս աւա- զով ու կեղտոտում աղբով։

Հէնց որ լսեց այս օձը, սկսեց աւելի պինդ սեղմել արաբի կոկորդը։ Գնացին նրանք առաջ, հասան մի բարձր արմաւենու ու կանգնեցին։ Արաբը պատմեց արմաւենուն, թէ բանն ինչումն էր։ Արմաւենին ասաց.

— Ճշմարիտ է ասում օձը։ Ահա ես աճում եմ անապատում. ինձանից զատ ոչ ոք չըկայ, որ ապաստարան տայ ճանապարհորդներին։ Բայց մարդիկ իմ շւաքում հանգստանում են, իմ պը- տուղներս անուշ են անում ու սկսում են կըտր- տել տերևներս, քերում, քերքշտում են կճեպս, վառում են տակս կրակ։ Բացի այս կըտեսնես, որ ժամանակին ինձ էլ կըկտրեն արմատիցս, ինչպէս կտրեցին իմ ջուխտակ քոյրերիս, որ բուսել էին ինձ հետ միատեղ։ Ահա ինչպէս են հատուցա- նում բարութիւնը։

Օձն աւելի ու աւելի պինդ սեղմեց արաբի կոկորդը։ Արաբն այլեւս չէր կարողանում խօսել, այլ միայն խռխռում էր։ Ահա տեսնում է արաբը, որ հեռւում վազում է մի շնագայլ։ Արաբը նշաններով մի կերպ ցոյց տւեց օձին շնագայլը։ Օձը մի փոքր թողեց կոկորդը։ Արաբը որքան որ կարող էր բղաւեց շնագայլին.

—Կանգնի՛ր, բարեկամ, ես պիտի խօսեմ քեզ հետ։

—Լա՛ւ. խօսիր, միայն մի մօտենայ, կանչեց վախկոտ շնագայլն ու կանգնեց մի կողմ։

Մօտեցաւ արաբն օձի հետ շնագայլին և պատմեց նրան թէ ինչի մասին էր իր և օձի վէճը։

—Այդպէ՛ս. նա ազատե՞ց քեզ կրակից, հարցրեց շնագայլն օձին։

Օձն ասաց, որ ճիշտ է։

—Ի՛նչ որ դժւար է հաւատալ, ասաց շնագայլը։

Արաբն սկսեց պատմել, թէ բանն ինչպէս էր եղել։

—Չէ, ախպէր, ընդհատեց շնագայլը, թող ապա օձն ինքը ցոյց տայ թէ այդ բոլորն ինչպէս պատահեց, այն ժամանակ ես աւելի լաւ կըհասկանամ։

Արաբը մեկնեց նիզակը դէպի գետին, օձը նրա վրայով սողաց դէպի ցած աւազի վրայ։

—Է՛, ի՞նչ կասես այժմ դու ինձ, հարցրեց արաբը շնագայլին։

—Թ՚շնամիդ ոտներիդ տակն է, ասաց շնագայլը արաբին և դու դեռ հարցնում ես ի՞նչ անել.—սատկացրո՛ւ նրան շուտով։

—Ոչ, ասաց արաբը, այդ ըստ գազանների այդպէս է, բայց մեզ՝ մարդոցս ուրիշ օրէնք է տւած։ Մնաս բարով, օձ, ապրիր և յիշիր, որ աշխարհում կայ արդարութիւն։

Ու սլացաւ արաբն անապատի մէջ։

Ղազարոս Տէր-Գրիգորեանց



ԱՐԵՒՆ ԵԿԱՒ

(Ժողովրդական մոտիւ)

Արեւն եկաւ, սարէն իջաւ,
Մթնաշաղ է, լոյս չըկա՛յ,
Քամին փչեց՝ ծառերն անցաւ,
Տերեւաթափ է, լոյս չըկա՛յ...
Ցաւը սրտիս թափառ, մոլոր,
Քուրի՛կ, կարօտդ եմ քաշում,
Ինչո՞ւ թողիր մենակ, մոլոր,
Ղարիպ թողիր ու տրտում...

II

Աստղունքն ելան, մթնէն ելան,
Քուրի՛կ, դէմքդ միտս եկաւ.

Մուժը փաթթեց, սիրտս փաթթեց,
Աստղունք սրտիս մէջ վառւան.—

—

Վա՛յ, վա՛յ, քուրիկ, ղարիպ ախպօր
Կարօտ սրտով մի թողնիր.
Իմ օջախից, պստիկ տանից,
Խապար ղրկէ, մի թողնիր...

Յովհ. Կոստանեանց



ԳՈՂԵՐԻ ԹԱԳԱՒՈՐԸ

I



իսակն ու Միսակը երկու հարազատ եղբայրներ էին։ Երկուսն էլ հմուտ և յայտնի գողեր էին։ Քանի քանի անգամ նրանց հետամուտ են եղել մարդիկ, գիշերն արթուն հսկել են նրանց վրայ, հազար տեսակ հնարք են գործ դրել, որ մի կերպով նրանց ձերբակալեն և յանձնեն ոստիկանութեան, բայց ամեն մի ջանք ի զուր էր անցնում։ Երկու գող եղբայրները մեծ ճարպիկութեամբ դուրս էին պրծնում ամեն տեսակ թակարդից և նրանց գողութիւնը մնում էր միշտ անպատիժ։ Մեծ եղբայրը, Սիսակը հիւանդացաւ և մեռաւ։ Նրա

տասնևհինգ տարեկան որդին, Գասպարը, մնաց իր հօրեղբօր խնամքին: Միսակը կանչեց իր մօտ Գասպարին և ասաց.

—Որդի, դու արդէն մեծ տղայ ես դարձել. ժամանակ է, որ մի որևիցէ արհեստ կամ գործ սովորես և այդպիսով գտնես հացիդ ճանապարհը: Որ արհեստը, որ գործն ես աւելի շատ սիրում? ընտրիր քեզ համար մի բան և ես կ'աջակցեմ քեզ նպատակիդ հասնելու:

—Ես կըպարապեմ նոյն գործով, ինչով որ հանգուցեալ հայրս էր պարապում,—պատասխանեց Գասպարը:

—Հայրդ էլ ինձ նման գող էր... կարող ես դու էլ գողութիւն անել?

—Հա՛. քո քէֆի ուզած!

—Դէ որ այդպէս է, գնանք անտառը և ես կըփորձեմ քո գողութեան ընդունակութիւնները:

Հօրեղբայրը տարաւ Գասպարին անտառը և ասաց.

—Ահա տեսնում ես այն ծառի վրայ նըստած թռչունին?

—Հրամմել ես:

—Դու պէտք է զգուշութեամբ բարձրանաս ծառը և կամաց այն թռչունի թևից մի փետուր պոկես, այնպէս որ նա ոչինչ չիմանայ:

—Շատ լաւ,—պատասխանեց Գասպարը,—բայց որովհետև ես դեռ անփորձ եմ, ուստի

խնդրում եմ, որ առաջ ինքդ այդ բանն անես, որ ես էլ սովորեմ։ Քեզ շատ գլխացաւանք չեմ պատճառիլ, հօրեղբայր, առաջին օրինակդ ինձ համար բաւական կըլլինի։

Միսակը բարձրացաւ ծառը։ Թռչունը հանգիստ նստած էր և չէր նկատում, թէ ինչպէս գողը նրա թևից փետուր էր պոկում։ Այդ րոպէին, երբ Միսակը, շունչը իրան քաշած՝ ձեռքըն արդէն մօտեցրել էր Թռչունի թևին, Գասպարը ներքևից զգուշութեամբ հանեց իր հօրեղբօր վարտիկը, թագցրեց թփերի միջին և անմեղ դէմքով սկսեց նայել։ Միսակը ծառից կըրկին իջաւ, Թռչունի փետուրը ձեռքին բռնած։

—Հը՛. սովորեցիր գողութեան եղանակը?

—Հրամմել ես, հօրեղբայր, սովորեցի. հիմա ես էլ նոյնը կարող եմ անել... բայց քո գողութեան միջոցին ինչ որ կատարուեց, դու չիմացար?

—Ոչ։ Ինչ է կատարուել?

—Աբա մէկ ոտերիդ նայիր! ուր է քո վարտիկը?

—Վա՜հ!—գոչեց ապշած հօրեղբայրը և, իր մերկութիւնը ծածկելու համար, տափակ նստեց խոտերի մէջ։

—Այն ժամանակ, երբ դու զբաղուած էիր ծառի վրան, ես ներքևից քո վարտիկը գողացայ. բայց դու, որ այդքան տարւայ հմուտ և ճար-

պիկ գող ես, չընկատեցիր այդ բանը! Ահա, համեցէք հավկր...

Գասպարը թփերի միջից հանեց իր հօրեղբօր վարտիկը և տւեց նրան։

—Մաշալլա, Գասպար, —բացականչեց Միսակը,—իմ արևը վկայ, որ դու ինձանից էլ, քո հօրից էլ անցար... Այ դու շատ ապրես, որդի! օրհնեալ լինիս! բալամ, դու գող չես, այլ գողերի թագաւորը և սուլթանը! Հալալ լինի կերած հացդ!... Գնա, Տէր ընդ քեզ! Աշխարհը դմակ, իսկ ինքդ դանակ—հա կտրի ուտեր!.. Այս գիշեր գնանք միասին փող գողանալու։

II

Նոյն գիշերը, երբ ամենքն արդէն քնած էին և ոչ մի տեղ ձէն-ծպտուն չըկար, Միսակը և Գասպարը մօտեցան մի իշխանի տան, կոտրեցին լուսամուտի երկաթէ վանդակները, ներս մտան և, գողանալով իշխանի փողերի մի մասը, փախան, գնացին տուն։ Իշխանի փողերը շատ էին և անթիւ։ Միսակն ու Գասպարը չըկարողացան մի անգամից տանել իրանց հետ այնքան ծանրութիւն։ Այդ պատճառով էլ երկու գողերը ստիպուած էին մի քանի գիշեր շարունակ ներս սպրդել իշխանի տունը և կրել նրա հարստութիւնը։ Առաջին գիշերուայ գողութեան լուրը կայծակի արագութեամբ իսկոյն տարածւեց ողջ քաղաքում։ Թագաւորի հրամանով խու-



Թռչունների որս Սառուցեալ ովկեանոսում

ղարկութիւններ արեցին, երկար որոնեցին, պահապաններ դրին իշխանի դռան, բայց այնուամենայնիւ գողերին չըկարողացան բռնել: Գողերը ամեն գիշեր ներս էին մտնում իշխանի տունը և կրում նրա փողերը: Հարևան թագաւորը սկսեց ծաղրել ու ծիծաղել այդ քաղաքի թագաւորի վրայ:

—Փա՜հ, փա՜հ, փա՜հ! Թագաւորս եկաւ, թագաւորս գնաց! Երկի՛ր է կառավարում!... Ամբողջ մի շաբաթ շարունակ միևնոյն տնից փող են գողանում, իսկ թագաւորը գողերին չի կարողանում բռնել տալ... Վա՜յ, շնորհքդ Աստւած կտրի, թագաւոր!..

Մեր թագաւորն ամօթից չըգիտէր, թէ ինչ անէր: Ամեն անգամ, երբ գալիս, պատմում էին նրան հարևան թագաւորի ծաղր ու ծանակը, նա բարկացած բացականչում էր.

—Թող նա այդքան էլ չըծիծաղի, թէ չէ միևնոյն օյինը նրա գլխին էլ կըգայ!

Երկար մտածելուց յետոյ, վերջապէս մեր թագաւորը հրամայեց իշխանի պատուհանի տակը խոր փոս փորեն, մէջը հալած մոմով լցնեն և երեսը թեթև կերպով ծածկեն: Այդպէս էլ արին:

Գիշերը, երբ Միսակը մօտեցաւ պատուհանին, յանկարծ մինչև կոկորդը խրուեց հալած մոմի մէջ: Նա շատ դէս ու դէն ընկաւ, շատ չարչարուեց, բայց այնտեղից չըկարողացաւ դուրս

դալ: Գասպարն էլ իր կողմից շատ աշխատեց, բայց իր հօրեղբօրը չըկարողացաւ փոսից հանել:

—Բալամ, սուտ չեն ասում, որ կուժը ջրի ճամփին կըկոտրուի,— գոչեց յուսահատ Միսակը. —Գասպար, մնաս բարով, ես քեզանից անջատւում եմ յաւիտեան! բայց որպէս զի ինձ ոչ ոք չըճանաչի, գլուխս կտրիր և տար, տանը թաղցրու! թէ չէ՝ եթէ ինձ ճանաչեն, քեզ էլ կարող է վտանգ սպառնալ... մնաս բարով, որդի! Արի վերջին անգամ համբուրեմ և գլուխս կտրիր!... Շատ ընդդիմացաւ Գասպարն իր հօրեղբօր առաջարկութեան, բայց իզուր: Միսակը պահանջում էր նրանից կտրելու իր գլուխը:

Գասպարը մօտեցաւ իր հօրեղբօրը վերջին հրաժեշտը տալու և նրա սարսափելի պահանջը կատարելու:

—Որդի,- ասաց Միսակը, ես զզջում եմ իմ արարմունքից, բայց այժմ ուշ է: Գոնէ դու այսօրւանից թող գողութիւնը, որ դու էլ այսպիսի պատուհասի մէջ չընկնես: Այսօրւանից թող այս գծուծ և մոլի ճանապարհը, գնա ժամ, աղօթիր Աստծուն, օրհնիր նրա սուրբ անունը և խընդրիր նրանից, որ նա քաւութիւն տայ իմ արած մեղքերին և փրկի իմ յանցաւոր հոգին դժոխքի կրակից! Աղօթիր իմ հոգու փրկութեան համար և ինքդ էլ հեռացիր գողութիւնից! Հալալ քըրտինքով աշխատիր քո հացը!...

Գասպարը ոչինչ չըպատասխանեց. նա, ար-

ցուպքն աչքին, հանեց թուրը, կտրեց Միսակի գլուխը, դրեց պարկի մէջ և գնաց տուն։

III

—Ախ, անուշիկ մատաղ, Միսակ ջան!—գոչում էր Միսակի կինը և ողբում էր ամուսնու մահը,—առաջ ինձ սաղ-սաղ թաղէիր ու յետոյ ինքդ մեռնէիր!... Ախ! Ախ! Ախ!... Գողի կինը ուզում էր գնալ իշխանի պատուհանի մօտ, լալ ու ողբալ իր մարդի դիակի վրայ, որ դրանով մի փոքր հովացնի իր սիրտը, բայց Գասպարն արգելեց նրան այդ բանն անելու։ Նա վախենում էր, որ մի գուցէ կնոջ ողբով ճանաչեն Միսակին ու յետոյ գան, իրան ձերբակալեն։ Սակայն Միսակի կինը ոչինչ չէր ուզում լսել։ Նա վճռել էր անպատճառ գնալ և ողբալ իր մարդու դիակի վրայ։

—Դէ որ այդպէս է,—ասաց Գասպարը նրան,—երեք դյուժին ափսէ տար հետդ. հէնց որ կըհասնես իշխանի լուսամուտին, ափսէները վեր գցիր ձեռքիցդ և սկսիր լալ. անցորդներն այդպիսով կըկարծեն, թէ դու կոտրած ափսէների համար ես լալիս։

Միսակի կինը դեռ նոր էր հասել իշխանի տուն, երբ տեսաւ խռնւող ժողովրդի մէջին ընկած է Միսակի դիակը։ Ամենքը ապշած չուռ ու մուռ էին տալիս դիակը, միմեանց հարց ու փորձ անում. բայց ոչ ոք գողին չէր կարողանում ճանաչել, որովհետև նա առանց գլխի էր։

Այդ խառնակութեան միջոցին դիակի կողքին յանկարծ լսեց մի ինչ որ չրխկոց և կանացի ողբ։ Ամենքը յետ նայեցին և տեսան, որ մի կին վայր է թափել իր ափսէները, և աղիողորմ կերպով ճչում ու լալիս է։

Ժողովուրդը չըհասկացաւ այդ կնոջ լացի պատճառը։ Բարի մարդիկ, կարծելով, որ նա փշրած ափսէների համար է լալիս, խղճացին նրա վրայ և երեք դիւժինի փոխարէն նրան ընծայեցին 12 դիւժին ափսէ։ Միսակի կինը գալով տուն, առաջարկեց Գասպարին, որ նա մի կերպ բերի տուն Միսակի դիակը և յանձնի հողին։ Բայց Գասպարը ի՞նչպէս կատարէր այդ առաջարկութիւնը, քանի որ հօրեղբօր դիակը թագաւորի պահապանների հսկողութեան էր յանձնուած? Գասպարը երկար մտածելուց յետոյ, նստեց իր էշի վրայ, գնաց պահապանների մօտ և յայտնեց նրան, որ նա ուզում է ներկայանալ թագաւորին մի շատ կարևոր գործով։

— Թագաւորն այսօր ոչ ոքի չի ընդունում, —պատասխանեցին պահապանները, — գիշերս կըմնաս այստեղ, իսկ վաղը առաւօտեան կըներկայանաս։

—Ոչ, չեմ կարող մինչև վաղը սպասել,— պատասխանեց Գասպարը։

— Ինչու?

—Որովհետև գիշերս, երբ ամենքդ քնած կըլինիք՝ մեռելը կուտի իմ էշին։

—Տօ, խելքի տակլակ! — բացականչեցին զարմացած պահապանները,—մեռելը կուտի քո էշին, թէ քո էշը կուտի մեռելին?

—Մեռելը կուտի իմ էշին! — պնդեց Գասպարը։

—Մի վախենար! մի վախենար! եթէ մեռելը ուտի քո էշին, մենք էշիդ գնից քսան անգամ աւելի կըվճարենք քեզ!...

Գասպարը համաձայնուեց գիշերն անց կացնելու պահապանների հետ միասին։ Արդէն կէս գիշեր էր։ Նա խուրջինից հանեց ճաշի պաշար, գինի, պանիր ու տապակած միս և սկսեց հիւրասիրել պահապաններին։ Պահապանները կոնծում էին օղին ու գինին և օրհնում Գասպարին։ Չանցաւ երկար միջոց, պահապանները հարբած ընկան յատակի վրայ և սկսեցին քաղցր խռմփացնել։ Համգամանքից օգուտ քաղելով, Գասպարը մօտեցաւ իր հօրեղբօր դիակին, դրեց նրան էշի մէջքին, թոկերով ամրացրեց և ճանապարհ դցեց դէպի տուն։ Էշն արդէն ճանապարհը ճանաչում էր։

IV

Միւս առաւօտեան, երբ պահապանները զարթնեցին խոր քնից, Գասպարը գոչելով և աղաղակելով ամենքին սկսեց պատմել, որ մեռելը կերել է նրա էշին։

—Ի սէր Աստծոյ, կամաց, մի բղաւիր,—ասում էին նրան պահապանները—թէ չէ եթէ

թագաւորն իմանայ մեր անհոգութիւնը և մեռելի չքանալը, մեզ ամենիս կախել կըտայ...

Պահապանները, իրանց խոստման համեմատ, վճարեցին Գասպարին նրա էշի արժէքից քսան անգամ աւելի, բայց և խնդրեցին, որ նա Թագաւորին ոչինչ չըպատմի մեռելի չքանալու մասին։ Գասպարը, արդէն հասած լինելով իր նպատակին, այլ ևս չըներկայացաւ Թագաւորին. Նա գնաց տուն և թաղեց իր հօրեղբօր դիակը։ Սակայն Թագաւորն իմացաւ դիակի չքանալը։ Նա կանչեց պալատը բոլոր ժողովրդին և ասաց.

—Ով է ձեզանից այդ ճարպիկ գողը? Թող նա առաջ գայ և խոստովանէ իր յանցանքը! Ես նրան ոչ միայն չեմ պատժի, այլ և մեծ պարգև կըտամ, միայն թէ իմանամ, ով է այդ հնարագէտը, որի օխտից ես չեմ կարողանում գալ? Ես իմ հպատակների ներկայութեամբ խօսք եմ տալիս ներել նրան!

Այդ րոպէին խուռն ամբոխի միջից դուրս եկաւ Գասպարը, մօտեցաւ Թագաւորին, գլուխ տւեց, և խոնարհութեամբ կանգնեց նրա առաջ։ Ամենքն ապշած մնացին, երբ տեսան, որ այդ գողը դեռ մի պատանի է։

Թագաւորը արձակեց բոլոր ժողովրդին, Գասպարին տարաւ իր առանձնասենեակը և ասաց.

—Իմ խոստման համաձայն, ներում եմ քեզ,



Ցանկալի որսերը հեռանում են..,

բայց չես կարող այնպէս անել, որ մեր հարևան Թագաւորը չըծիծաղի ինձ վրայ?

—Կարող եմ, ձերդ մեծութիւն! Միայն ինձ տւէք երկու ծառայ և մի լաւ ձի։

—Ծառաները և ձին վաղն և եթ առաւօտեան պատրաստ կըլինի քեզ համար,—պատասխանեց ուրախացած Թագաւորը։

Միւս առաւօտեան Գասպարն առաւ ծառաներին, ձին, երկու հատ արկղ, մի սատանայի գլխարկ, զանգուլակներով զարդարուած մի եափնջի և ճանապարհ ընկաւ դէպի հարևան Թագաւորի երկիրը։ Հասնելով Թագաւորանիստ քաղաքը, Գասպարը դրեց գլխին սատանայի գըլխարկը, փաթաթւեց եափնջու մէջ և գիշերն թաքուն մի կերպով մտաւ Թագաւորի ննջարանը։ Թագաւորն ու Թագուհին քաղցր քնած էին։ Գասպարը կանգնեց արքայական անկողնակալի առաջ և սկսեց թափահարել եափնջին։ Զանգուլակների ձայնից յանկարծ զարթնեցին Թագաւորն ու Թագուհին և լեղապատառ սկսեցին նայել գիշերային տեսիլքին։

—Միք վախենալ ինձանից,—ասաց Գասպարը,—ես սուրբ Գէորգն եմ... Աստուած ինձ ուղարկել է ձեզ մօտ, որ ես ձեզ այս գիշեր տանեմ դրախտը!

—Եթէ այդ ճիշտ է,—ասացին միաբերան Թագաւորն ու Թագուհին,—թող կատարւի Աստուծոյ կամքը, շուտով տար մեզ դրախտը...

Բայց ասա մեզ, սուրբ Գէորգ, Հայր Աբրահամը այնտեղ է?

—Այո, այնտեղ է, և անհամբեր սպասում է ձեզ,—պատասխանեց Գասպարը,—ահա ձեզ համար պատրաստել եմ երկու արկղ, շուտով մտէք նրանց մէջ, որ տանեմ ձեզ։

Թագաւորն ու թագուհին իսկոյն մտան Գասպարի առաջարկած արկղների մէջ։ Գասպարը ծածկեց արկղները և պարաններով ամրացրեց նրանց խուփերը։ Ապա իր տարած ծառաների օգնութեամբ այդ արկղները դուրս տարաւ, բարձեց ձիու վրայ և ճանապարհ ընկաւ դէպի հայրենիք, դէպի իր թագաւորի մօտ։

V

Ճանապարհին թագաւորն ու թագուհին շուտ շուտ ձայն էին տալիս արկղների միջից.

—Արդեօք շուտով տեղ կը հասնե՞նք. սաստիկ սոված ենք!

—Շուտով, շուտով կը հասնենք... դրախտը շատ էլ հեռու չէ, շուտով տեղ կը հասնենք և այնտեղ Հայր Աբրահամը ձեզ մանանայ կը տայ ուտելու...

Երբ որ Գասպարը հասաւ հայրենիք, իսկոյն իրանց թագաւորին յայտնեց, որ երկու արկղ ծիծաղ է բերել ուրիշ երկրից, և արկղները միմիայն կարող են բացուել բոլոր պալատականների և ժողովրդի ներկայութեամբ։ Թագաւորն իսկոյն ժողովեց պալատականներին և բոլոր ժո-

գովրգին։ Ամենքը երկմտութեամբ ու հետաքրքրութեամբ նայում էին արկղներին և անհամբեր սպասում, թէ երբ կըբանայ նրանց Գասպարը։

Ահա Գասպարը բացեց պարանները և երկու արկղների խուփերը հանդիսաւոր կերպով դէն շպրտեց։ Արկղներից դուրս եկան գիշերային շապիկներով հարևան երկրի թագաւորն ու թագուհին... Ամենքը մնացին ապշած և բերանները բաց։ Հարևան թագաւորն ու թագուհին իսկոյն հասկացան իրանց ուր լինելը և ամօթից կարմրած, իրանց աչքերը գետին յառեցին։

—Ձերդ մեծութիւն,—ասաց Գասպարն իր թագաւորին,—ահա այն թագաւորը, որ անդադար ծիծաղում էր քեզ վրայ։

Թագաւորը հանդիսաւոր կերպով առաջ գնաց, բռնեց Գասպարի թևը և ներկայացրեց նրան հարևան թագաւորին.

—Ահա այն գողը, որին ես չէի կարողանում բռնել... արդեօք քո երկրում կըգտնուի մի այնպիսին, որ սրա պէս անձնատուր լինի իր թագաւորին և ազատի նրան ուրիշների ծաղրից։ Ապա թագաւորը դիմեց Գասպարին.

—Սրանից յետոյ դու իմ աջ թևը կըլինես և նւիրում եմ քեզ իմ գանձի կէսը։

—Ձերդ մեծութիւն,—խօսեց Գասպարը,—դու մեծահոգութեամբ ներեցիր իմ յանցանքները և ես էլ դրա փոխարէն ազատեցի քեզ քո հարևանի

ծաղր ու ծանակից: Բայց և այնպէս չեմ կարող ընդունել քո գանձի կէսը, որովհետև ես չեմ աշխատել նրան իմ հալալ քրտինքով... Ես հրաժարւելով քո նւէրից, այսօրւանից հրաժարւում եմ և գողութիւնից: Իմ հօրեղբայրը գողութեամբ հարստացաւ, գողութեամբ էլ զոհեց իր կեանքը: Նա Աստծոյ սուրբ պատւէրը ոտնատակ տըւեց և դրա համար էլ ստացաւ իր արժանի պատիժը: Նա վերջին շունչը փչելիս ինձ ասաց, որ ես հեռանամ գծուծ և մոլի ճանապարհից. և հօրեղբօրս վերջին խօսքերը այսուհետև ինձ համար սուրբ պատգամ պիտի լինեն... Մնաք բարեաւ, ինձ այլևս չէք տեսնիլ, ես գնում եմ անապատը ճգնելու և քաւելու ծանր մեղքերս... Այսուհետև իմ սեպհական աշխատանքով պիտի ապրեմ աշխարհիս երեսին: Հալալ քրտինքով պիտի ճարեմ հացս. իսկ քո գանձի կէսը, որից ես հրաժարւում եմ, բաժանեցէք որբերին և աղքատներին!... Մնաք բարով!

Գասպարը դուրս գնաց պալատից, իսկ թագաւորն ու ժողովուրդը խորասուզւեցին ծանր մտածմունքի մէջ:

Յարութիւն Թումանեանց

ԱՂԱՒՆԻՆԵՐ

—

Օրերը ի՜նչպէս պարզ և պայծառ են։ Մայիս է. երկինքն անամպ է ու կապոյտ, օդը թարմ է և անուշաբոյր. բայց ի՜նչպիսի շքեղ կանաչով են ծածկւած դաշտերն ու մարգագետինները։ Ապա փոքրիկ թուփը, կարծես կանաչ թաւիշէ շորեր է հագել և ինչպէս ուրախ-գւարթ ցցւած է, կասես թէ ժըպտում է մարդու երեսին։

Զեփիւռը խաղում է մատաղ տերևների հետ, երբեմն այդ չարաճճին թեքում է նոյն իսկ ծառի գլուխը, իսկ ծառը ժողովում է բոլոր ոյժերը և ուղղւում. քամին կրկին անգամ է թեքում, ծառն էլ նորից վեր է ուղղւում... Այսպէս զեփիւռն այնքան է խաղում ծառերի հետ, մինչև որ նրանց ձանձրացնում է այս խաղը։

Մարգագետինների վրայից հոսում է առւակը և ցած ձայնով շշնջում է խոտի ու թփի հետ, որ աճել է նրա ափին։ «Վը՜շշ, վը՜շշ, վը՜շշ—կարկաչում է առւակը. շը՜շշ, շը՜շշ,

ը՛շշ—խշշում է խոտը և թփի տերևները, թէև նրանք ուրիշ-ուրիշ լեզուներով են խօսում, սակայն իրար լաւ են հասկանում և ապրում են իրար հետ սիրով, իրար օգնում են։ Առուակը ջրում է իր ջրով ափի թփերի արմատները, իսկ նը-րանք տալիս են նրան ստուեր ու զովութիւն ամառուայ շոգերի ժամանակ, որպէս զի նա վշտից չցամաքի։ Թռչունները սա-լառնում ու ճռւողում են, խօսելով իրար հետ թռչունի լեզուով, ուրախ երգեր երգելով։

Մայիսեան այդ գեղեցիկ օրերին երկու աղաւնի թը-ռան անտառ զբօսնելու և նստեցին ջահել կուինջ ուռենու վրայ։ Նրանցից մէկը տարիքով էր և շատ լուրջ ու մտածող, իսկ միւսը՝ ջահել էր, ուրախ և անհոգ։ Ջահել աղաւնին առաջինն եղաւ, որ խօսք բացեց.

—Ղո՛ւ, ղո՛ւ, ղո՛ւ։ Ի՞նչու դու, ծերուկ, տխուր ես։ Նայի՛ր տես ինչպէս պարզ է օրը և ամեն տեղ լաւ։

Ծեր աղաւնին գլուխը բարձրացրից և ասաց.

—Ղո՛ւ, ղո՛ւ, այսօր օրը լաւ է և պայծառ, բայց ես մը-տաբերում եմ իմ կեանքի մի ուրիշ օրը, որ այսպէս պարզ էր ու լաւ. ես յիշում եմ այն օրը, որ որսորդը զարկեց մօրս...

—Ղո՛ւ, ղո՛ւ, ղո՛ւ, ո՛հ, ինչ սոսկալի բան է, շարունակեց ջահել աղաւնին, դադարելով ոստից-ոստ թռչկոտելը։ Պատմի՛ր, ինչպէս մնացիր մենակ և մեծացար առանց մօր։

—Դէհ, լսի՛ր,—ասաց ծեր աղաւնին և ցած ձայնով պատմեց իր վէպը—ղու ղո՛ւ, ղո՛ւ, մայրս չորս ձագ ունէր. մենք էլ շատ փոքր էինք, երբ մեր մայրը վերջին անգամ մեզ համար կերակուր բերեց, ուտեցրեց, խմեցրեց և ուղղեց մեր թոյլ թևերը։ Մենք հանգիստ կերպով պառկեցինք հայրենի յարկի տակ և քնեցինք։ Յանկարծ ինչպէս այժմ լսում եմ,—շրա՛խկ, հրացանի ձայն լսւեց։ Իսկոյն ես ընկայ թփի տակ և կանաչ տերևիկը ծածկեց ինձ։ Տեսնեմ մայրս չկայ։ Նկատեցի, որ մի մարդ բռնել է նրա ոտքերից, իսկ գլխից հոսում է կար-միր արիւնը։ Նա վեր սուաւ եղբայրներիս էլ և ով գիտէ ուր

տարաւ: Ես մտածում էի. ինչու նա ինձ էլ հետը չըտարաւ: Ուզեցի նրա յետեւից վազել, բայց խոտերի մէջ բռնուեցի և մնացի մենակ, ինքս էլ չիմացայ, թէ ինչ պատահեց ինձ հետ և ուր թաքնուէի. այդ ժամանակ շատ տրտում էի ես: Այն ինչ քամին փչեց, և քշեց երկնքի երեսը հանեց սև ամպեր, կայծակը զարկեց և նրա յետեւից թափուեց յորդառատ անձրև: Ես դուրս չեկայ տերևի տակից, որի տակ թաքնուել էի, բայց նա լաւ չէր պահպանում ինձ. ես ամբողջովին թրջուեցի և դողում էի, ինչպէս տենդ ունեցողը: Չըգիտեմ թէ ինչպէս այդ ժամանակ ես չըմեռայ: Անձրևն անցաւ, կրկին դուրս եկաւ երկնքի վրայ կարմիր արևը և ինձ տաքացրեց տերևի տակ. նորից լաւացաւ օրը. չորս կողմը լաւ էր, բայց ես կորցրի ուրախութիւնս, ինչպէս որ էի առաջ մօրս մօտ. դրա հետ միասին ես սաստիկ քաղցած էի: Դուրս եկայ ես տերևի տակից, որպէս զի կերակուր ճարեմ և հէնց դուրս եկայ, տեսայ երկու երեխայ, որոնք ծաղիկ էին քաղում. նրանք էլ ինձ տեսան:

—Ախ, ինչ փոքրիկ թռչուն է,—ասաց նրանցից մէկն ինձ մօտ վազելով:

Ես ուզեցի ծածկուել տերևների տակ, բայց արդէն ուշ էր. արագ վազել ես չէի կարող, իսկ երեխաները շտապով ինձ մօտ վազեցին և նրանցից մէկն առաւ ինձ իր ձեռքը և պինդ սեղմեց: Ես սաստիկ ցաւ զգացի, բայց ձայն չըհանեցի, որովհետև վախենում էի նրանցից:

—Սա աղաւնու ձագ է,—ասաց միւսը, զննելով ինձ.—Տանենք հետներս տուն և խաղանք հետը:

—Տանենք,—պատասխանեց միւսը. և երկուսն էլ տուն վազեցին ինձ էլ հետները տանելով: Իսկ թէ նրանք ինձ ինչպէս տարան, ես հիմա էլ սարսափում եմ յիշելով: Բռնեցին ոտքերիցս ու այնպէս քաշ տուին մինչև տուն. միայն երբեմն նայում էին ինձ վրայ, որ տեսնեն կենդանի եմ թէ չէ, և դարձեալ վազում էին. իսկ իմ աչքերն արիւնով լցուեցին, գլուխս շատ ծանրացաւ: Ո՜հ, ինչպէս ցաւում էր:

Հոլանդիայի թագուհի *Վիլհելմինա* — մանկական հասակում

Աղաւնին մի վայրկեան լռեց և հառաչեց. ջահիլ աղաւնին էլ հառաչեց. նա երևակայում էր թէ ինչպէս կըցաւէր մեծի սիրտը, երբ որ նա փոքր էր և այնպէս տանջւել էր։

—Իսկ երբ որ երեխաներն ինձ տուն հասցրին—շարունակեց մեծ աղաւնին,—խոկոյն և եթ առաջս ածեցին հատիկներ, բայց գլուխս այնպէս էր ցաւում, որ ամենևին ուտել չէի կարող։ Ես այնպէս ուժից ընկայ, և այնպէս ողջ մարմինս տկարացաւ, որ մինչև անգամ շարժւել չէի կարող, թող թէ կարողանայի բան ուտել. ես ուզում էի մի անկիւնում հանգստանալ։ Ինչպէս էլ այն ժամանակ ցաւ զգացի յիշելով իմ անտառ ապաստանարանը, կանաչ տերևը, ուր տակ մօրս մահւան ժամանակ ես պահւեցի։ Բայց աւա՜ղ, այդ պատսպարանն էլ կտրւեց ինձանից։

—Նա կուշտ է,—ասացին երեխաները, տեսնելով որ ես չեմ կտցում հատիկները—սկսենք խաղալ։

Երեխաները բերին կատուին, խսկ իմ ոտքերից թել կապեցին, ու քաշ տւին.—կատուն վազում էր յետևիցս, շատ անգամ թաթը դիպցնում ու ճանկռում էր ինձ։ Օ՜հ, ինչպէս կսկծում էր, ինչպէս կսկծում էր, ինչպէս ցաւում։ Եթէ կարողանայի լաց լինել, ջերմ արտասուք կըթափէի...

Այսպէս նրանք խաղում էին ինձ հետ դաւթում. ես միայն մտածում էի, թէ մօտ է վախճանս ու աչքերս փակեցի։ Յանկարծ հարևան ցանկի միջից երեխայական մի սուր և զայրացկոտ ձայն լսւեց։

—Ինչո՞ւ էք չարչարում խեղճ թռչնին, անպիտաններ։

Ես կրկին անգամ բաց արի աչքերս ու տեսայ, որ տղան հարևան ցանկի միջից դուրս թռաւ, մօտեցաւ ինձ չարչարողներին, կտրեց նրանց ձեռքի թելը, որից ես կապւած էի, և զգուշութեամբ ինձ ձեռքն առնելով, տուն տարաւ։ Այստեղ նա դրեց մի ինչ որ փափուկ բանի վրայ, փոքրիկ ափսէի մէջ ջուր լցրեց և իմ առաջ հաց մանրեց։ Այս ամենը սարքելով, նա հեռացաւ ինձանից, նստեց պատուհանի մօտ, սկսեց գիրք

կարդալ։ Նա յաճախ վրաս էր նայում. մի քանի անգամ ինձ մօտեցաւ, մի անգամ էլ համբուրեց ու ասաց.

—Խեղճ Թռչնիկ, ինչպէս քեզ տանջել են։ Դու մինչև անգամ ուտել, խմել չես կարող։

Բոլոր օրն ու ամբողջ այդ գիշերը չէի կարող շարժուել և նստել էի անշարժ։ Միայն միւս օրը մի փոքր կազդուրուեցի և մի քանի կում ջուր խմեցի։ Բարի երեխան լցնում էր նոր ջուր ինձ համար և շաղ էր տալիս հացահատիկներ։ Այո, լաւ երեխայ էր։ Քանի որ ես շատ փոքր էի, նա ինձ իր սենեակումն էր պահում, իսկ յետոյ ես ապրում էի նրա մօտ, տանը, և այնտեղ էր նա ինձ կերակուր բերում, իսկ հիմա, իմ վարուժանի հետ ես բոյն եմ շինում նրա տան բարձր կտուրի վրայ և մեր ձագուկները միշտ անվտանգ են մնում։ Նա ինքն արդէն մեծ տղայ է դարձել, և փոքրիկ չարաճճի երեխաները, վախենալով նրանից՝ երբէք ձեռք չեն տալ նրա տան կտուրի վրայ գտնուած բնին։

—Ահա այդ բոլորը—ասաց ծեր աղաւնին, մի փոքր կանգ առնելուց յետոյ—այսօր էլ միտս եկաւ, մտածեցի ու դրանից էլ խիստ տխրեցի։

Ծեր աղաւնին լռեց։

—Այո, տխրալի է, տխրալի,—ասաց ջահիլ աղաւնին, ցաւում եմ քեզ, ծերուկ ընկեր.—Իսկ ես մօրս մօտ մեծացայ ու միշտ լաւ է եղել ինձ համար, ես չըգիտէի ո՛չ մի հոգս, ո՛չ մի վիշտ... ղո՜ւ, ղո՜ւ, ղո՜ւ...

—Է՜հ, փառք Աստծու, անցածն անցել է—վրայ բերեց ծեր աղաւնին—սակայն ժամանակ է տուն դառնալու։

Երկու աղաւնիները սաւառնեցին ու թռան դէպի գիւղ։

Թարգմ. Հ. Նիկողոսեան



ՈՒՌԵՆՈՒ ԵՐԳԸ

—

Ձիւն էր եկել խոր անտառում
Ցուրտ ու բուք էր, մարդ չըկար,
Փայտը հսկայ հանդարտ ու լուռ
Կարծես իր վիշտը կուլար:

Սառցի տակին փոքրիկ առուի
Մեղմ կարկաչը չէր լսւում,
Ափի վրայ վարդն անման
Անուշ հոտով չէր ծաղկում:

Եւ լռել էր բլբուլի անուշ
Սիրոյ անվերջ մեղեդին,
Չըկար այնտեղ երգ ու ծիծաղ,
Ո՛չ մի հրճւանք երկնային:

Միայն անձայն լուռ անտառում
Ծեր ուռենին կըշնչար,
Եւ մեղմ ձայնով, անվիշտ սրտով
Մի անուշ երգ կըմրնչար—

«Հանդարտ անցիր, սիրուն վըտակ,
«Քո սառոյցն էլ կըհանդչի,
«Քիչ էլ դուկաց, անուշ բլբուլ,
«Սիրուն վարդդ էլ կըբացուի։

«Շատ եմ անցրել ցուրտ ու ձմեռ
«Ու հասել եմ զով գարնան,
«Ո՛չ մի ձմեռ, ո՛չ մի սև օր՝
«Մնալու չէ՛ անվախճան»...

Պետ. Մոճոռեանց



ՅՈՎԲ ԵՐԱՆԵԼԻՆ

—

(Աստուածաշնչական լեգենդա)

Օրինաւոր մարդու կեանքը առաքինութեան ամենալաւ դասն է և արատների ամենախիստ յանդիմանութիւնը։

Ս. Սմայլս

Հարաւում,—ուր թռչում, գնում են ծիծեռնակները խումբ-խումբ, երբ մեզ մօտ սկսւում են աշնանային անձրևներն ու ցրտերը, ուր զգալով դաժան ձմռան գալուստը, երկարաձիգ երամներով գնում են արագիլներն ու չւող թռչունները,—կայ մի հրաշալի, սիրուն աշխարհ, որի անունն է Արաբիա։

Այնտեղ պայծառ արևը լցնում է երկիրը տաք ճառագայթներով. այնտեղ մուգ-կապոյտ երկինքը հազիւ է պատահում որ ծածկւի սև թանձր ամպերով. այնտեղ ձգւած են լայնատարած, աւազուտ, շնչարգել անապատներ, ուր չըկայ թփի, խոտի նշոյլն անգամ։ Բայց այնտեղ կան ցրւած և ընդարձակ արօտատեղիներ՝ խիտ, հիւթալի խոտով, ուր արածում են սիրուն, ուժեղ, յաղթանդամ ձիերի ջոկերը և միասապատ, համբերատար ուղտերի բազմաթիւ խմբերը։ Այնտեղ բնում

են գեղեցկակազմ, հովանոցանման արմաւենիները, այնտեղ բուսնում է և անուշահոտ ղահւէթուփը, և լայնարձակ տերևներ ունեցող թիւթիւնը, և անուշաբոյր խոտեր, նարինջներ, կիտրոններ, ընտիր չամիչ, և ուրիշ շատ ու շատ աստուածային բարիքներ։

Շատ հին ժամանակ, այնտեղ՝ Արաբիայում ապրում էր Յովբ անունով մի մարդ։ Այդ մարդը շատ հարուստ էր. նա չըգիտէր իր ուղտերի, եզների և էշերի թիւը՝ այնքան բազմաթիւ էին նրանք. նրա տունը լի էր ծառաներով։

Յովբը սաստիկ սիրում էր Աստծուն և կատարում նրա բոլոր պատուիրանները։ Նա իր ունեցածից միշտ մաս էր հանում ծանօթների, հարևանների և բոլոր իրան դիմողների համար. նա որբերի, աղքատների, տնանկների հայրն էր, անբախտներին հանգստացնողը. յոյս ներշնչողը, վհատեալներին սիրտ տուողը, թոյլերի պաշտպանը. նա ամենքի արդարադատ և անկաշառ դատաւորն էր, որի համար և Արաբիայի ամենահեռաւոր անկիւններից մարդիկ նրան էին դիմում՝ իրանց դատը լուծելու։ Եւ այդ աշխարհում չըկար մի այնպիսի մարդ, որին ամենքը թէ աղքատ և թէ հարուստ, թէ անյայտ և թէ յայտնի, նշանաւոր մարդիկ՝ այնքան սիրելիս, այնքան պատւելիս լինէին ինչքան Յովբին։

Յովբն ունէր եօթը տղայ և երեք աղջիկ։ Նրա որդիքը միմեանց հետ շատ սիրով էին ապրում։ Նրանք ամեն օր եղբայրներից մէկն ու մէկի մօտ էին հաւաքւում՝ հերթով, և իրանց ազատ ու պարապ ժամերը ուրախ և զւարթ ժամանակ էին անցկացնում։ Ամեն շաբաթ՝ Յովբը հաւաքում էր իր մօտ իր որդկերանցը և Աստծուն մատաղ անում, որ նա ների այդ ժամանակամիջոցում կատարած իրանցից որև է մէկի մեղքը՝ եթէ գործել է։

Յովբն ապրում էր շատ բախտաւոր, և խաղաղութեամբ իր օրերը սահեցնում։

Այդ իսկ օրը, երբ Յովբի որդիքը եղբօր մօտն էին հա-

ւաքւել, Աստծուն ներկայացան բոլոր հրեշտակները, և նրանցից ամեն մեկը պատմում էր՝ թե ուր էր և թե ինչ էր տեսել։ Եկաւ և սատանան.

—Ո՞րտեղից ես գալիս, հարցրեց նրան Տէրը։

—Ես շրջեցի ամբողջ աշխարհը,—պատասխանեց նա։

—Իսկ տեսա՞ր Յովբին։ Ասա, ճանաչո՞ւմ ես արդեօք մի այնպիսի մարդու, որ կատարէր իմ բոլոր պատուիրանները և այնպէս ճշմարտասէր ու գթառատ լինէր, ինչպէս Յովբը։

—Ի՞նչ կայ զարմանալու՝ որ Յովբը կատարում է քո բոլոր պատուիրանները, որ նա այնքան ճշմարտասէր և գթառատ է,—պատասխանեց սատանան.—նա ամենից հարուստն է, ամենից յարգուածը, ամենաերջանիկ մարդն է ամբողջ Արաբիայում... Դու այնքան առատ պարգևատրել ես, որ նրան միանգամայն ձեռնտու է կատարել քո պատուիրանները, և ճշմարտասէր և բարի լինելն այնքան էլ դժւար բան չէ։ Սակայն փորձիր խլել նրանից այն ամենը՝ ինչ նա ունի, և այն ժամանակ կըտեսնես՝ որ Յովբը էլ այն չի լինիլ, ինչ որ ներկայումս է։

—Լա՛ւ,—ասաց Աստուած,—փորձիր։ Ես տալիս եմ քեզ իրաւունք այն բաների վրայ՝ ինչ նա ունի. սակայն՝ ձեռք չըդիպցնես նրա մազին իսկ։

Սատանան գնաց։

Իսկ այդ ժամանակ Յովբը իր տանն էր, զբաղուած իր առօրեայ գործերով։ Յանկարծ ներս է փզում ծառաներից մէկը։

—Տէ՛ր իմ,—ասում է նա,—քո եզները արածում էին մօտակայ դաշտում, և նրանց մօտ էլ՝ էշերը։ Յանկարծ վրայ թափւեցան թշնամիները, բոլոր անասունները տարան, իսկ բանւորներին ու հովիւներին սպանոտեցին։ Միայն ես կարողացայ ազատւել...

Չէր վերջացրել ծառան իր պատմութիւնը, երբ ներս ընկաւ միւսը.

—Տէ՛ր իմ, քո ոչխարները արածում էին մարգերում։ Յանկարծ սկսեց երկնքից նրանց վրայ կրակ թափուել, որ և կործանեց թէ ոչխարներին և թէ խաշնարածներին։ Կենդանի միայն ես մնացի...

Չէր վերջացրել և՛ այս ծառան իր պատմութիւնը՝ երբ յայտնուեց երրորդը.

—Տէ՛ր իմ,—ասում է նա,—մի քանի խումբ թշնամիներ թափուեցին քո ուղտերի վրայ, տարան նրանց և սպանելով բոլոր ուղտապաններին, փախան։ Միմիայն ես կարողացայ փախչելով ազատուել...

Իսկ դռան շեմքին արդէն կանգնած է չորրորդ ծառան, և չէ համարձակւում հաղորդել մի նոր դժբախտութիւն ևս։

Նայում է նրան Յովբը և սպասում։

—Տէ՛ր իմ,—ասում է, վերջապէս չորրորդը,—բոլոր որդիներդ հաւաքուել էին մեծ եղբօր մօտ։ Յանկարծ՝ անապատի կողմից զարհուրելի մրրիկ բարձրացաւ, տունը հիմն ի վեր կործանեց, և միջի եղողներին՝ բոլորին էլ տակովն արաւ։ Միայն ես կարողացայ այնտեղից ժամանակին դուրս պրծնել...

Այս գուժաբեր լուրը լսելուց յետոյ Յովբը տեղից բարձրացաւ և, իրանց երկրի սովորութեան համեմատ, պատառոտեց իր վերնազգեստը, ապա խոնարհուեց մինչև գետին և ասաց.

—Մերկ ծնուեցի, մերկ էլ կըմեռնեմ։ Աստուած ինձ ամեն ինչ տուեց՝ և՛ ընտանիք, և՛ փառք, և՛ հարստութիւն,—ամենն էլ յետ առաւ։ Թող յաւիտեան օրհնուի Նրա սուրբ անունը։

Եւ ահա՛, մի ակնթարթում, այնքան հարուստ և բախտաւոր Յովբը դարձաւ աղքատ, և մնաց միայնակ։

Նորից հաւաքուեցին Տիրոջ մօտ հրեշտակները. յայտնուեց և սատանան։

—Ո՞ւր էիր,—հարցրեց նրան Տէրը։

—Ես շրջեցի ամբողջ աշխարհը,—պատասխանեց սատանան։

—Տեսա՛ր արդեօք Յովբին, լսեցի՛ր թէ ի՛նչ ասաց նա, երբ ծառաները յայտնեցին նրան իր ամբողջ կարողութեան և բոլոր որդոց կործանման գուժաբեր լուրը. ինձանից գանգատւելու փոխարէն, նա իմ անունն էր փառաբանում: Համոզւեցի՛ր վերջապէս, որ աշխարհիս երեսին Յովբն է: Ինչո՞ւ էիր ուզում վատախօսել նրա մասին իմ առաջ:

—Ամեն մարդու համար թանգ է իր սեպհական մարմինը,—խօսեց սատանան.—Դու ինձ թոյլ տուիր վերցնել Յովբից ամենը՝ ինչ նա ունի, բայց արգելեցիր ձեռք տալ իրան՝ Յովբին: Ճշմարիտ է, որ նա այժմ աղքատ է և միայնակ, սակայն նա առողջ է, նա ինքը դեռ չէ տանջւում, իսկ այդ բանը՝ մարդուս ամենագլխաւորն է: Բայց թոյլ տուր ինձ՝ վարակել նրան մի որ և է հիւանդութեամբ, և այն ժամանակ տես, Յովբը արդեօք կըշարունակի՞ անունդ փառաբանել:

—Լա՛ւ,—ասաց Տէրը,—քո իրաւունքի տակ եմ դնում նրա մարմինը: Գնա՛:

Սատանան արագութեամբ սլացաւ, իջաւ դէպի ցած:

Այդ իսկ րոպէից Յովբի մարմինը, գլխից մինչև ոտ, ծածկւեց վէրքերով: Նրանցից անընդհատ թափւում էր գարշահոտ թարախ, և զզւելի որդեր թաւալում նրա մէջ: Այս զարհուրելի հիւանդութիւնը կոչւում է բորոտութիւն: Եւ քանի որ բորոտութիւնը վարակիչ հիւանդութիւն է, նրանով հիւանդացողներին արտաքսում էին քաղաքից դուրս, որպէս զի հիւանդութիւնը նրանցից չանցնի և՛ միւս բնակիչներին:

Յովբն էլ նմանապէս դուրս եկաւ քաղաքից և պառկեց դաշտում՝ մի մոխրակոյտի վրայ: Նա իր օրերն անց էր կացնում սարսափելի տանջանքներ կրելով, և անդադար քորելով, պոկելով խոցերն իր հոտած, փտած վէրքերից: Ամենքը թողին հեռացան նրանից. էլ ոչ ոք չէր մօտենում նրան. կերակուր հեռուից էին շպրտում...

Կինը համոզում էր Յովբին, որ բաւական է որքան Աստծուն արդարադատ համարեց, սիրեց նրան, որպէսզի դրանով

անջատի, բաժանի նրան Աստծուց, և այն ժամանակ, ասում էր նա համոզուած կերպով՝ Աստուած կըպատժի քեզ մահով։

—Չէ՞ որ քեզ համար աւելի լաւ է մեռնել, պրծնել միանգամից քան թէ այդքան տանջուել և չարչարուել։ Կըմեռնես և այլևս չես տանջուիլ,—այսպէս վերջացրեց Յովբի կինը իր խօսքը։

—Դու ինչ որ անմիտ խօսքեր, անիմաստ բառեր ես արտասանում,—պատասխանեց նրան Յովբը.—Մի՞թէ մենք միայն նրա համար ենք ապրում, որ ընդունենք Աստծուց միշտ այն՝ ինչ որ լաւ է, ցանկալի է, իսկ նրա տւած վատը՝ ոչ։

Յովբի հեռու, ուրիշ քաղաքներում ապրող բարեկամներն իմացան նրա գլխին եկած անբախտութիւնները, և եկան նրա մօտ՝ նրան սիրտ տալու. մխիթարելու։ Երբ նրանք առաջւայ հարուստ, բախտաւոր և առողջ մարդու փոխարէն տեսան աչքից ձգած, զարհուրելի հիւանդութիւնով վարակւած և ցնցոտիների մէջ փաթաթւած մի աղքատի՝—սոսկացին... Եօթն օր լուռ նստած էին նրանք Յովբի մօտը, լուռ՝ որովհետև չէին իմանում թէ ինչով կարելի է նրան մխիթարել, հանգստացնել։

Վերջապէս, սկսեցին խօսել։ Նրանք ասում էին Յովբին, որ նա, երևի, մի մեծ մեղք է գործել, և իր հպարտութեան պատճառով՝ չէ խոստովանում այդ, Աստծուց թողութիւն խնդրել չէ ուզում, որի համար էլ անշուշտ Աստուած նրան այդպիսի պատժի է ենթարկել։

Յովբն առաջւայ պէս պառկած էր մոխրակոյտի վրայ, տանջւում էր, խոցերը քորում, պոկոտում, և այդ ժամին էլ, ինչպէս և առաջ, սրտանց օրհնում, փառաբանում էր Աստծու սուրբ անունը, նրան բարեգութ, ողորմած և արդարադատ համարում։

Զուր էր Յովբը ամենայն ջանք գործ դնում՝ իրան արդարացնելու, զուր էր ասում՝ որ ինքը ոչ մի՝ նոյն իսկ փոքր՝ մեղք չէ՛ արել, ոչ մի յանցանք չէ՛ գործել, չէին հաւատում նրան իր բարեկամները, և միմիայն իրանց ասածն էին պնդում։

Յովբին անբախտութիւնից աւելի, հիւանդութիւնից էլ աւելի տանջում էր այն, որ իր ամենամօտիկ, ամենասրտակից բարեկամներն իր ասածներին, իր միանգամայն ճշմարիտ խօսքերին հաւատ չէին ընծայում, և նրան համարում էին վատ մարդ։

Տեսնելով, որ ինքը ոչ մի կերպ չէ կարողանում հաւատացնել իր բարեկամներին այն բանում՝ որ ինքը միանգամայն անմեղ է, միանգամայն արդար, ասածները ճշմարիտ,— բացականչեց․

— Տէր, ո՛վ Արարի՛չ Աստուած, յայտնուի՛ր, և դատի՛ր մեզ։

Եւ յանկարծ, կայծակի փայլմունքի մէջ, թունդ որոտման ժամանակ՝ յայտնուեց Արարիչը։ Նա արդարացրեց Յովբին, իսկ նրա բարեկամներին, Յովբին անիրաւացի կերպով անպատուելու և դատապարտելու համար, ուզում էր պատժել։ Սակայն նրանց համար Յովբն աղերսեց Աստծուն, և Աստուած ներեց նրանց։

Վերջապէս՝ Յովբն առողջացաւ։ Այս բանը շատ շուտ իմացան նրա բոլոր բարեկամները, ազգականներն ու նախկին յարգողները։ Ամենքն էլ շա՜տ ու շա՜տ ուրախացան, և իրանց ուրախութեան արտայայտման որպէս կենդանի ապացոյց՝ նրա համար ամեն մէկը, իր կարողութեան ներածի չափ, ընծայ բերեց։

Անցաւ բաւականին ժամանակ, և Յովբն առաջուանից էլ աւելի հարուստ դարձաւ, նրա ոչխարների ու ծառաների թիւն աւելի ևս շատացաւ։

Նա նորից ունեցաւ զաւակներ՝ եօթը տղայ և երեք աղջիկ, ինչպէս առաջ էր։

Այնուհետև երկար, շա՜տ երկար ապրեց Յովբն աշխարհիս երեսին, խաղաղ և հանգիստ կեանք էր անցկացնում, առաջուայ պէս՝ կրկին շարունակում էր վհատեալներին օթևանել, անպաշտպան թոյլերին հովանաւորել և երկար ժամանակ, Յովբէ

մանկանից յետոյ, յաճախ յիշում էին նրա մասին ամբողջ Արաբիայում, թէ աղքատ և հարուստ, թէ հասարակ ու նշանաւոր մարդիկ փառաբանում էին նրա անունը, օրհնում նրա քնքոյշ յիշատակը...

Յաւելուած

Յոյսը՝ այդ կեանքի գիրքն է, նրա շաւիղը տանում է դէպի երջանկութեան օթևանը:

Մարդս կարող է իրան բախտաւոր և երջանիկ զգալ այն ժամանակ միայն, երբ նա լիովին դիմանայ՝ հիւանդութեանը, անբախտութեանը, երբ նա կարողանայ այդ ամենից արիաբար գլուխ հանել:

Մարդս թշւառութեան, անբախտութեան, հիւանդութեան ժամանակ չըպէտք է յուսահատւի և ընկճւի բնութեան կամքի առաջ, այլ, ամենայն կերպ, պէտք է աշխատի ինքնիրան սիրտ տալ, մխիթարել, ինքն իր մէջ յոյս հաւատ ներշնչի:

Երբ մարդս կարողանում է կեանքի պատահարներին դիմանալ՝ նա արդէն բախտաւոր է, երջանիկ է...

Լաւ իմացէք, որ բախտաւորութիւնը փողի և շքեղ ապրելու մէջ չէ. այլ համբերատարութեան, գթասրտութեան, ճշմարտասիրութեան մէջ:

Երբ իմ խիղճը հանգիստ է, սիրտս մաքուր, զգացմունքներս ու արտայայտութիւններս անկեղծ՝—ես այն ժամանակ թէկուզ հիւանդ, թշւառ և աղքատ լինեմ, այդ փոյթ չէ, ես ինձ այնուամենայնիւ բախտաւոր կըզգամ:

Փորձիր սիրտդ միշտ մաքուր պահել, խոհեմ լինել, մեծերի բարի խորհուրդներին հետևել, բարութիւն անել, օգնել ընկերներիդ, սիրտ տալ նրանց, մխիթարել՝ թշւառութեան ժամանակ, բարի, ցանկալի, Աստուածահաճոյ ճանապարհով գնալ, ծնողներին պատկառանքով վերաբերւել, մեծերին պատ-

ուել՝ եթէ արժանի են, մի խօսքով՝ կատարել այն՝ ինչ թէ Աստծուն, թէ քեզ և մարդկանց է հաճելի,—և դու կըտեսնես, որ այն ժամանակ, հաւատա ինձ, բաց կըլինի քեզ համար բախտաւորութեան, փափագելի երջանկութեան անձուկ ճանապարհը։

Օ՜հ, երանի գիտենաք որքան լաւ բան է՝ տանջուել, չարչարուել, հիւանդութեան, անբախտութեան, թշուառութեան դիմանալ, և այդ ամենից յետոյ՝ մի օր վերջապէս դուրս գալ բախտաւորութեան խաղաղ, ցանկալի և երանաւէտ նաւահանգիստը...

Թարգմ. Գ. Բաբուրեանց





ՄԻ ՕՐՒԱՑ ԿԵԱՆՔԸ

(«Հանրամատչելի առողջապահութիւն»—Կարլ Րէկլամի)

—

> Աննշան և չնչին, ամեն օր կրկնուող գործերը մեծ ազդեցութիւն են թողնում մարդու վրայ։
>
> **Կարլ Րէկլամ**

ւրաքանչիւրն մեզանից աշխատում է երկարակեաց լինել, բայց ուշադրութիւն չենք դարձնում մեր առօրեայ կեանքի վրայ և մի անգամ մեզ հարց չենք տալիս, թէ մեր դարթնելու կամ քնելու ժամանակը յարմա՞ր է մեր առողջութեան կամ մեր կերածն ու խմածը օգտաւէտ են արդեօք. Նոյնպէս և պառկելու տեղն ու անկողինը յարմա՞ր են բնութեան պահանջներին։ Բնութեան պահանջներին հակառակ իւրաքանչիւր արած քայլը առաջացնում է հիւանդութիւն. ուստի տեսնենք ինչ է պահանջում բնութիւնը մեզանից մի օրում, որոնց կատարելով մենք առողջ պիտի մնանք։ Եթէ մի օրւանը մենք մի քանի օր միմեանց վրայ կատարենք սրբութեամբ, այդ մի օրւանը սովորութիւն կդառնայ մեզ համար, որովհետև մեր կեանքն ինչն է, եթէ ոչ օրերի և մեր արած գործերի հաւաքածուն։ Ի վերջոյ չըմոռանանք յիշելու, որ մեր ապրած

կեանքը չափւում է ոչ թէ տարիներով, այլ արած գործերով. իսկ ո՞վ է մեզ խանգարում և երկար ապրել ու վայելել բնութեան բարիքները և արած գործերը շահաւէտ դարձնել յօգուտ հասարակութեան, որի անդամներից մինն էլ մենք ենք: Մենք կըսկսենք գիշերային քնից և անցնելով թէ երբ պիտի քնել, ինչպիսի անկողնում, երբ պիտի զարթնել և ինչպէս լւացւել, ինչ պիտի հագնել և ինչպէս, ինչ պիտի նախաճաշել ու ճաշել, ինչպէս և երբ, ճաշից յետոյ ինչով պիտի զբաղւել, կըհասնենք դարձեալ գիշերային քնին: Մենք կըյիշենք և այնպիսի խրատներ, որոնց կատարել մենք սովոր չենք. բայց ցանկալի է, որ մեր մէջ էլ մուտք գործի. ուստի դարձնում ենք առանձին ուշադրութիւն:

Քուն.—Քնած ժամանակ հանգիստ է առնում ոչ ամբողջ մարմինը. շնչառութեան գործարանները շարունակում են իրանց գործը, սիրտը իր կանոնաւոր բաբախումն չի դադարեցնում. իսկ շնչառութեան և սրտի բաբախման միջոցով առաջանում է արեան շրջանառութիւն. ամբողջ մարմնում քնած է միայն գլխի ուղեղը: Ով ցանկանում է քնել հանգիստ և վեր կենալ թարմ ոյժերով՝ երկրորդ օրւայ աշխատանքի համար, քնելու ժամանակ պիտի խոյս տայ ուղեղը գրգռող մըտածմունքներից ու գործերից: Շատերը փորձած կըլինին, որ երբ մեզ վրայ դրած պարտականութիւնը սրբութեամբ կատարում ենք, մենք հանգիստ խղճով կարողանում ենք քնել. իսկ երբ մեր խիղճը մեզ խայթում է մեր արած վատ գործերի պատճառով, աչքերից քունը փախչում է. գերմանական առածն ասում է՝ «Ամենալաւ բարձը հանգիստ խիղճն է»: Մի խօսքով՝ որպէս զի հանգիստ քնել կարողանանք, պիտի ի նկատի ունենանք այս երկու կէտը. ընթրիք չանել շատ ուշ գիշերով, այսինքն քնելուն մօտիկ, և չծանրաբեռնել ուղեղը քնելուց առաջ զանազան մտածմունքներով: Իսկ եթէ հանդամանքներից մէկը ստիպւած է բանել ուշ գիշերով, նա կարող է գործը վերջացնելուց յետոյ կարդալ անմեղ գրքեր կամ խօ-

Ք Ն ա ծ է

սել անմեղ բաների մասին։ Շատ վնասակար է անկողնում պառկած գիրք կարդալ. նամանաւանդ երիտասարդներին, որոնք սիրահարական վէպեր են կարդում։

Ննջարան.—Ննջարանումն է անցկացնում մարդս համարեա իր ամբողջ կեանքի երրորդ մասը. ուստի շատ վնասակար է ննջարան շինել պստիկ խցիկներում. մենք օդով ենք ապրում, առանց նրա մի րոպէ էլ չենք կարող դիմանալ, ուստի հարկաւոր է շատ և մաքուր օդ. այնպէս որ աւելի լաւ կլինէր որ մեր դահլիճները ննջարանի տեղ ծառայէին. պատուհանները միշտ բաց պիտի պահել, չըվառել, եթէ հիւանդ չըկայ և շատ չըծածկւել։ Շատ վնասակար է քնել նոր ներկած սենեակներում. շատ անգամ են երեխաները թունաւորւել այդ հոտից և մի գիշերում վախճանւել։ Որքան էլ օգտակար լինի մաքուր օդը, բայց այնուամենայնիւ վնասակար է քնել բաց պատուհանների տակ. պիտի աշխատել, որ օդը ուղղակի մեզ չըդիպչի քնած ժամանակ. ուստի կարելի է բանալ ննջարանից առաջ եղող սենեակի դուռը կամ ննջարանի վերին պատուհանը այն էլ կիսածածկ։ Եթէ ննջարանը դարձրած է դէպի արեւելք, առաւօտեան արևի ճառագայթները կարող են վնասել մեր աչքերին. դրա առաջն առնելու համար աւելի լաւ է կապոյտ վարագոյր գցել կամ մահճակալը տեղաւորել այնպէս, որ աչքերը չընկնեն պատուհանի վրայ։

Անկողին.—Պիտի աշխատել, որ անկողինը չըձգւի երկու պատերի մէջը եղած անկիւնում, որովհետև ամենաանպիտան, խոնաւ ու անառողջ օդը անկիւններումն է լինում. պիտի աշխատել ոտները դէպի պատն անել, իսկ գլուխը սենեակի մէջ տեղը։ Անկողինը չըպիտի մօտ լինի լուսամուտին, որովհետև չընայած, որ լաւ էլ փակած լինի, այնուամենայնիւ լուսամուտի արանքներից աննկատելի կերպով օդը անցնում է կամ դիպչում քնածին և առաջացնում ոսկրացաւ կամ **ռէւմատիզմ**. ուստի լաւ է պատուհանի և մահճակալի մէջ դնել մի մեծ լայն տախտակ։

Ով ցանկանում է առողջ լինել, նա (10 – 50 տարեկան) փետրէ բարձից ու շատ փափուկ անկողնուց պիտի խոյս տայ. անկողինը պիտի լինի՝ ոչ շատ տաք և ոչ էլ սառը, այլ չափաւոր, ոտները պիտի տաք ծածկել, որովհետև ոտների մրսելուցն են առաջ գալիս դանազան հիւանդութիւնները. փորն և կուրծքը չափաւոր, իսկ գլուխը հով պիտի պահել. ուստի մեր բարձերը, որոնք տաքացնում են մեր գլուխը, աւելի լաւ է ոտների տակը դնենք: Տիկինները և օրիորդները պիտի զգոյշ լինին իրանց գիշերային գլխի փաթաթաններից, որովհետև գիշերով քնած ժամանակ մեզանից, այսինքն, մեր կաշու՝ մանաւանդ գլխի ծակոտիկներից դուրս է գալիս գոլորշի. իսկ փաթաթանները այդ բանը խանգարում են. դրա առաջն առնելու համար լաւ է ցանցերով (չեպչիկներ) պատել մազերը, եթէ չեն ուզում որ խճճւի:

Քնելու ժամանակը.—Մարդս պիտի քնի այնքան, որքան հարկաւոր է վերականգնելու ջլատած ոյժերը, աւելին կըվնասի. փոքրահասակները աւելի կարիք ունին քնելու օր. ծծկեր երեխան քնի մէջ է անցկացնում ամբողջ 20 ժամ: Արաբական առածը դրանց համար է ասած՝ «պառկիր քնելու հաւերի քնելու պահուն, իսկ բանել սկսիր՝ երբ աքաղաղները զարթնում են»: Գիշերով երեխայք պիտի ընթրեն $1^1/_2$ ժամ առաջ, նախ քան քնելը: Չաղ մարդկանց համար երկար քունը վնասակար է. դրանից է առաջանում կաթւածը:

Զարթնել.—Պիտի սովորել միշտ որոշեալ ժամին վերկենալ. մի քանի օրից յետոյ այդ մեզ համար սովորութիւն կըդառնայ և որոշեալ ժամը կըհասնի թէ չէ, աչքներս կըբանանք: զարթնենք թէ չէ, իսկոյն պիտի վերկենալ. երկրորդ անգամ քունը աւելորդ բան է, որովհետև գլխացաւ է պատճառում մարդուն; երկրորդ՝ բանելու աշխոյժը կորցնել տալիս և երրորդ՝ առաւօտեան պարզ և մաքուր օդ ծծելը, այն՝ էլ գարնան ամենաառողջարար բանն է. գիտնական Հեբէլը ասում է՝ «շուտ վերկենալը անդամներին առողջութիւն է բերում. իսկ հոգուն

ուրախութիւն և առողջութիւն. երբ ժամի 4-ին պիտի զարթնես, պարկիր քնելու իննին»: Ձմեռը, երես լւանալու ժամանակ պիտի գործածել մի քիչ տաք ջուր ու չոտքով կամ գինիով կամ ռոմով կամ սպիրտով սրբել ատամներն ու լնդերքը: Եթէ յարմարութիւն կայ, ամեն առաւօտ ամբողջ մարմինը սրսկել սառը ջրով. իսկ եթէ չէ՝ գոնեա երեսը, վիզը և բազուկները, որովհետև սառը ջուրը ամրապնդում է մեր կաշին. իսկ կաշւի ամրապնդութիւնը պահպանում է ցրտից և ազատում հիւանդութիւններից:

Հագնել.—Վերկենալուց և երես լւանալուց յետոյ իսկոյն շապիկ փոխելն և հագնելը շատ առողջարար է. մենք պատահեցինք մի կրթւած առոյգ ծերունու, որ կատարելապէս առողջ էր. Նրա առողջութեան գլխաւոր պայմաններից մինն էլ՝ ինչպէս ինքն էր ասում՝ գիշերային և ցերեկային շապիկներ պահելն էր. զարթնելիս և քնելիս փոխել է շապիկը և առաւօտեան հանած ամբողջ օր չորացած շապիկը հագել է գիշեր և ընդհակառակը: Երեսորբիչը և շապիկը պիտի փռել արձակ լայն տեղ—թէկուզ սենեակում. Ննջարանի դռներն բաց պիտի թողնել մինչ քնելը:

Հագնելու ժամանակ պիտի աշխատել մարմնի բոլոր մասերը ծածկել, նամանաւանդ կուրծքը, որովհետև մրսելուց հազար տեսակ հիւանդութիւն է առաջ գալիս: Յիշեցնում ենք, որ ոտները պիտի տաք պահել, նամանաւանդ գարնան և աշնան սկզբներին, երբ սառը օդը և խոնաւ փողոցները դեռ ձմեռն են յիշեցնում. արևն էլ թէև ծագում է, բայց չի տաքացնում ու չորացնում. Թող զգոյշ լինին կանայք բարակ կօշիկներից, որ հագնում են հէնց որ նկատում են լաւ ու պայծառ օր: Երբ երեխաներին դուրս էք ուզում թողնել, կամ զբօսնելու, կամ տեղ ուղարկելու, ուշադրութիւն դարձրէք թէ քանի աստիճան է օդի տաքութիւնը: Կրծկացաւ ունեցողները պիտի աշխատեն քամու և բուքի ժամանակ չըդուրս գալ տանից, օդի շատ թեթև լինելու պատճառով:

Նախաճաշ եւ տանից դուրս գալը.— Բանւոր դասակարգի համար նախաճաշը ուժեր կազդուրող մի բան պիտի լինի: Մեր սպաները առաւօտեան նախաճաշից յետոյ, որ հացից ու մսից էր բաղկացած, խմում էին գինի կամ մեղր, իսկ մենք դըրա փոխարէն խմում ենք միայն չայ կամ սուրճ, այն էլ առանց կաթի և ուտում երկու կտոր հաց. ահա այդ տեսակ փոփոխումն առաջացրեց մտաւոր և ֆիզիքական թուլութիւն նոր սերունդի մէջ: Օրինակելի նախաճաշը անգլիականը պիտի համարել, որը բաղկացած է չայից, մսից կամ ձւից: Երեխաներին մինչև պատանեկական հասակը կաթը՝ սպիտակ հացով, այնքան էլ դուր չէ գալիս. տւէք նրան սև հաց, տեսէք ինչ ախորժակով է ուտում, նամանաւանդ եթէ աւելացնէք և կարագը: Կրծքացաւ ունեցողները կարող են նախաճաշել շւէյցարացոց նման, այն է՝ մեծ քանակութեամբ չաղ կաթ՝ հացով և մեղրով: Շատերի մէջ տարածւած է այն կարծիքը, թէ առողջութեան համար լաւ է առաւօտեան վաղ զբօսնել ոտով, նոյն իսկ անօթի: Ով ամբողջ օրը նստած է և քիչ է յոգնում, օր. հարուստ կանայք, կամ որոնք ապրում են եկամուտներով, նրանց համար ի հարկէ լաւ է առաւօտեան զբօսանք. բայց նա, ով որ ամբողջ օրը պիտի բանի, աւելի լաւ կանի, որ իր ուժերը պահի աշխատանքի համար և զբօսնի երեկոյեան՝ աշխատանքը վերջացնելուց յետոյ: Ամառը պիտի լողանալ գետում երեկոյեան: Առաւօտեան առաջին անգամ փողոց դուրս եկողը լաւ կանի թաշկինակով բերանը ծածկի, մանաւանդ հազ և կրծքացաւ ունեցողները:

Ճաշայ ժամանակը և կանոնները.— Թէ ինչ պիտի ուտել և որքան, այդ գիտէ իւրաքանչիւրը մեզանից փորձով. այժմ անցնենք այն հարցին, թէ երբ պիտի ճաշել և ինչ պայմաններում: Շատ հազիւ կըպատահի, որ հասակաւորները մինչ ժամի 12-ը քաղցեն. բանւորների համար նամանաւանդ անյարմար է կէս օրին ճաշել, որովհետև մեծ քանակութեամբ կերակուր ընդունելով, նրանք կորցնում են ընդունակութիւն և

ախորժակ բանելու և այդպիսով գործը վնասում է, որովայնը ծանրաբեռնելու պատճառով. նոյնպէս վնասակար է ուշ գիշերով ընթրել, որովհետև հանգիստ չի քնում մարդս. ուստի աւելի լաւ է 12-ին որպէս նախաճաշ ուտել բուլիօն կամ չայ, հաց ու պանրով, կամ շոկոլադ, կամ սառը եփած միս, կամ ձու աւելի թոյլ եփած. իսկ երեկոյեան ժամի 6-ին նշանակել ճաշ, և ուտել այն ամենը, ինչ որ այժմ սովորապէս 1-ին կամ 2-ին ենք ուտում: Այդ ձևով նախ՝ մենք 12-ից յետոյ էլ կարող ենք օրինաւոր զբաղուել և չըթուլանալ, երկրորդ՝ երեկոյեան աւելի ժամանակ կունենանք հանգստանալու և երրորդ այդպիսով կանհետանայ ընթրիքը, որովհետև երեկոյեան վեցից յետոյ եթէ 10-ին քնելու ենք, դժուար թէ ընթրել կամենանք: Ուրեմն առաւօտը լուացուելուց յետոյ չայ՝ թեթև նախաճաշով, ապա 12-ին լաւ նախաճաշ, կամ կէս ճաշ և 6-ին ճաշ. երեխաների և ծերերի համար աւելի կարճ ժամանակամիջոցներ է հարկաւոր, եթէ հնար կայ 9-ին նախաճաշ, պիտի տալ դրանց և 3—4 ճաշ: Դրանց մէկ ուտելուց միջև միւս ժամանակամիջոցը դարձեալ 6 ժամ է գնում:

Ինչպէս պիտի ուտենք: Ամենից առաջ պիտի զգուշանալ ինչպէս շատ տաք, նոյնպէս և սառը կերակուրներից, ատամնացաւի առաջն առնելու համար: Կերակուրը պիտի ուտել դանդաղ. այդ ասում ենք ոչ թէ շատակերութեան համար, այլ որպէսզի լաւ ծամուի և ապա հեշտութեամբ մարսուի: Պիտի խոյս տալ կանգնած կամ կռացած ճաշելուց. ամենայարմարը հին յունական և հռոմէական ձևն է՝ այն է՝ պառկած մի քիչ բարձր դիրքով. այդ դրութեամբ փորը, աղիքները և ջղերը թուլացած են և ազատ կարողանում են լայնանալ, շարժուել և շուտ մարսել մեր կերածը. բայց, որովհետև այդ դիրքով այժմ անյարմար է և անքաղաքավարութիւն է համարւում, ուստի պիտի աշխատել գոնէ նստել ըստ կարելւոյն ուղիղ, այնպէս որ փորը չըճնշուի, այդ պատճառով էլ նեղ շորեր չըպիտի հագնել: Ամենավատը ծալապատիկ նստած հաց ուտելն է. թէ

քնչու, արդէն գիտէք: Անկանոն բան է և բանել կամ կարդալ և ուտել, որովհետև մարդս չի կարող երկու տիրոջ ծառայել, և ուղեղին և փորին:

Եթէ հնարաւոր է, պիտի աշխատել չըճաշել մեր բանած կամ կեցած սենեակում, որովհետև նախ այդ սենեակը յիշեցնում է մեզ մեր հոգսերը և երկրորդ կերակուրներից սենեակի օդը ապականւում է: Фաբրիկաներ, արհեստանոցներ և գիտնականների աշխատարաններ լիքն են լինում անառողջ օդով. ուստի լաւ է ճաշելիս բանալ բոլոր լուսամուտները և ուրիշ տեղ ճաշել. այդ օգուտ կըբերի թէ տիրոջ, որ նրա բանւորները առողջ կըմնան և աւելի աշխոյժով կըբանեն և թէ բանւորներին, որոնք առողջ կըմնան: Կարճ՝ գործարաններ, արհեստանոցներ և ուսումնարաններ ամբողջ գիշեր պիտի բաց պահել և աշխատել անհոտ ծաղիկներ պահել օդը մաքրելու համար:

Ճաշից յետոյ մինչեւ քնելը.—Ճաշից առաջ լաւ է կատարել մի քանի մարմնամարզական վարժութիւններ. իսկ ճաշից յետոյ նոյնը վնասակար է, որովհետև մարմնին պիտի թոյլ տանք հանգստանալ և փորին մինչեւ կերածը մարսելու համար: Ծնողներից շատերը ստիպում են որդոց, որոնք ուսման մէջ են, ճաշելուց անմիջապէս յետոյ սովորել երկրորդ օրւայ դասերը. այդ բանը առաջացնում է երկու տեսակ վնաս. առաջին, որ երեխայք անուշադրութեամբ են պարապում, երկրորդ՝ օրւայ այդ մասում աւելի թոյլ են լինում ուսումնարանից նոր եկած լինելու պատճառով, երրորդ՝ նիհարանում են ու գունատւում վատ մարսողութեան պատճառով: Նոյնը պիտի ասել և գործարաններում բանողների համար. նրանց հարկաւոր է տալ գոնեա մի ժամ հանգստութիւն, որովհետև փորը մեշոկ (ջուալ) չէ և մարդս էլ շողեմեքենայ, որ չըդադրեն. ճաշից յետոյ կարող են քնել գունատ, նիհար և թոյլ մարդիկ և երիտասարդներ 16—24 տարեկան, կամ 50 տարեկանից անցանձինք. իսկ ամուր կազմւածք ունեցողներին կամ չաղ մարդոց խորհուրդ չի տրւում ճաշից յետոյ քնել:

Ճաշից յետոյ ժամանակը կարելի է անցկացնել անմեղ խօսակցութեան մէջ կամ լրագրներ կարդալով: Ճաշից յետոյ հանգստացողները լաւ կանեն, եթէ պառկեն և ոչ թէ նստեն, որովհետև պառկած դրութեամբ մարսողական գործարանները չեն ճնշւում: Նախ քան հանգստանալը, պիտի բերանն ողողել և ատամները սրբել չոտքով: Հանգստանալուց յետոյ ձեռքով բանել շատ օգտակար է, իսկ ով որ մտաւոր զբաղմունք ունի, նա թող երեկոյեան դէմ՝ մթնելուս, զբաղւի կամ մարմնամարզութեամբ կամ կացնով փայտ ճղելով կամ դրա նման մի այլ զբաղմունքով, օր. պարտիզում բանելով: Քնելու նախապատրաստութիւնների մասին յիշեցնելով, վերջացնում ենք մեր խօսքը:

Ննջարանի պատուհանները պիտի բաց պահել մինչ քուն մտնելը. պիտի սրբել ատամները, լւանալ ձեռները, երեսը, մի բաժակ ջուր խմել, (եթէ հնարաւոր է աղբիւրի): Այդ բոլորից յետոյ անպատճառ փոխել շապիկը, աշխատել հոգով անդորր լինել, օդանցք (վենտիլացիա) բանալ և ապա քուն մտնել:

Յար. Միրիմանեանց



ԿԵՆՍԱԳՐԱ-ԿԱՆ

ԱՐԻՍՏՈՏԷԼ

—

Յոյների մէջ դասակարգերը զանազանւում էին իրարից իրանց ճաշակի զարգացման նրբութիւնով ու գեղեցիկն ըմբռնելու և իւրացնելու շնորհքով. Նրանց խսպառ պարզ հագուստի նազելի ծալքերը արտայայտ էին նրանց հոգու կատարելութեան, և աւելի զարմանալի է թէ ինչ ճշտութեամբ ու ճարտարութեամբ նրանց գեղարւեստագէտները դիտում էին այդ ամենը և դուրս բերում իրանց անդրիներում։ Արևելեան ճոխ փարթամութիւնը յայտնի չէր այտեղ։ Արիստոտէլի աշխոյժ և տաք բնաւորութիւնը Պլատոնը միշտ ցանկանում էր զսպել, իսկ Արիստոտէլը մանկութիւնից չէր վարժւած գրկանքների և ճնշման, ունէր սովորութիւններ և բարք, որ Պլատոնեան փիլիսոփայութեան կանոնադրութեան համաձայն չէին։ Արիստոտէլը չէր սիրում, որ նրան խրատ տային թէ ինչպէս պէտք է հագնուել, ուտել, խմել. նա սիրում էր կանանց և հակառակ ժամանակի սովորութեան՝ չէր թաքցնում այդ, որով շատերը տրտնջում էին։ Արիստոտէլը Պլատոնի հետ կեցաւ տասնևօթը տարի. նա երևում է, սիրում էր հանճարեղ և յամառ աշակերտին և նրան հաղորդեց ոչ միայն իր բոլոր գիտեցածը, այլ և իր ամբողջ հոգին ներշնչեց նրա մէջ։ Արիստոտէլը միշտ խորին երախտագիտութեամբ ու պատկառանքով էր վերաբերւում իր ուսուցչապետին. Նա մի տեղ գրում է. «Նրան (Պլատոնին) չէր սիրտ անիլ վատութիւն անել ամենավատ մարդն անգամ։» Յետոյ իր Էտիկայի մէջ ասում է թէ շատ ծանր է իր համար

ճշմարտութեան աղագաւ, ընդդիմախօսել Պլատոնին։ Եւ յիրաւի, գաղափարների ստեղծողի հետ հակաճառելիս՝ նա գործ է ածում զսպւած և խորին յարգական ոճ։ Մինչև Պլատոնի վախճանւելը Արիստոտէլը բաց չարաւ իր փիլիսոփայական դպրոցը, թէպէտ իր հայեացքներն արդէն ամեն մանրամասնութեամբ զտւած պատրաստ էին. այդպէս Արիստոտէլը քսան տարի միայն, ինչպէս ասում են, առանձնական կեանք վարեց պարապելով լոկ ուսմամբ։

Ճիշտ յայտնի է, որ Պլատոնի մահւան տարին, այն է 348-ին Ք. Ծ. առաջ, Արիստոտէլը թողեց Աթէնքը ու գնաց ճանապարհորդել Փոքր Ասիայում, որի պարսկական լուծից ազատելը Աթէնացիների և Մակեդոնացիների իղձն էր. այդ ծրագիրն էր, որ Աղէքսանդր մեծին ծնեց։ Արիստոտէլը Փոքր Ասիայում լաւ ընդունելութիւն գտաւ և մտերմացաւ Հերմիաս կուսակալի հետ, որ շատ ազնիւ կրթութիւն էր ստացել Աթէնքում. նա սպանւեց պարսկական Արտաքսերքս թագաւորից, որի ձեռը դաւով մատնեց մի յոյն։ Այդ առթիւ իր վիշտը փարատելու համար Արիստոտէլը մի դրւատ գրեց Առաքինութեան, որ սկսւում է այսպէս. «Ո՜, Առաքինութիւն, որ ստիպում ես մարդկանց ձգտել իրանց բնութեանը, դու ես առաջին գանձը, որին պիտի ջանադիր լինի ամեն մարդ տիրապետել։ Քո պատճառով Յունաստանը իր կրած տանջանքներովն հանդերձ իրան բախտաւոր է համարում և անտրտունջ տանում է իր անվերջ վիշտը։ Քո սրբասուն գեղեցկութեան համար, ո՜վ ազնիւ և մաքրափայլ կոյս, Յունաստանը անվրդով դիտում է իր զաւակների մահը։ Այնպէս գեղեցիկ է այն մշտնջենական պտուղը, որով դու հրապուրում ես հերոսների հոգին։ Յոյներն այդ պտուղը գերադասում են տոհմական նշանաւոր ծագումից, ոսկուց և անոյշ հանգստութիւնից և այլն...»

Իր այդ բարեկամի յիշատակին Արիստոտէլը Դելֆեան տաճարում մի անդրի դրաւ, որի տակը գրել էր այս արձանագրութիւնը. «Մի պարսիկ արքայ՝ հակառակորդ ամեն օրէնքի՝ սպանել տւաւ սրան, որի պատկերն այստեղ փորագրւած է։ Վեհանձն ոսոխը կաշխատէր յաղթել սրան յայտնի կերպով՝ զէնքով. դաւաճանը մատնեց սրան, ոըսալով կեղծ մտերմութեան ցանցով։» Ի՜նչ հակիրճ ոճ և պարզութիւն։ Արիստոտէլը խոր և ուժեղ զգացող էր ու իր զսպած բնաւորութիւնով ճշտում էր

Գեօթէի խօսքերը թէ՝ «Միայն սանձուած ոյժերից է դուրս ցոլանում նուրբ չքնաղը և ազնիւը»:

Ասիայում Արիստոտէլը ամուսնացաւ իր հանգուցեալ սիրելի մտերմի որբ և չքաւոր մնացած քրոջ Պիթիադայի հետ. սա խիստ սիրեց Արիստոտէլին և վախճանուելիս կտակեց իր ոսկորները տեղաւորել իր պաշտելի ամուսնու շիրմի մէջ:

Պիթիադայի մահից յետոյ Արիստոտէլը պսակուեց իր գեղանի աղախին Հերպոլլիսի հետ, որից ունեցաւ մի արու զաւակ—Նիկոմախ: Արիստոտէլը որպէս պարսկական բռնակալութեան ոխերիմ թշնամի՝ գործնական մասնակցութիւն ունէր Յունական քաղաքականութեան մէջ, վասն որոյ պարսից թագաւորը հետամուտ էր նրան կեանքից զրկելու, ուստի Արիստոտէլը խոյս տուաւ և բնակուեց առ ժամանակ Լեսբոս կղզում: Այդ ապաստարանի մէջ եղած միջոցին Մակեդոնիայի արքայ Փիլիպպոսը հրաւիրեց Արիստոտէլին գալ և իր որդի Ալէքսանդրի դաստիարակը լինել: Աւանդութիւնն ասում է թէ իր գահի ժառանգի ծննդեան տարին Փիլիպպոսը մի այսպիսի բովանդակութեամբ նամակ գրեց Արիստոտէլին. «Մակեդոնիայի թագաւորը ողջունում է Արիստոտէլին. յայտնում եմ քեզ, որ ինձ մի որդի է ծնուել. ես շնորհակալ եմ աստուածներից ոչ թէ ինձ արու զաւակ պարգեւելու համար, այլ որ նա ծնուել է Արիստոտէլի ժամանակ. վասն զի ես յոյս ունիմ, թէ քո տուած կրթութեամբ նա արժանաւոր կըլինի իմ գահը ժառանգելու և մակեդոնացիներին կառավարելու»:

Ալէքսանդրի կրթութեանը Արիստոտէլը նուիրեց երեք տարի. իր արքայական աշակերտի հետ փիլիսոփան պարապում էր ամեն կրթիչ առարկաներով և ամեն բանի մէջ պահում էր այն չափն ու տակտը, որ յատուկ էին նրան միշտ և ամեն բանի մէջ: Աշակերտի և դաստիարակի համար կառուցել էր ճոխ ապարանք, շրջապատուած գեղեցիկ այգեստանով: Ութ տարի Մակեդոնիայում անցկացրած միջոցին Արիստոտէլը շարունակ զբաղւում էր բնագիտութեամբ: Փիլիպպոսը և յետոյ Ալէքսանդրը ոչինչ չէին խնայում նպաստելու համար Արիստոտէլին իր գիտնական հետազօտութիւնների մէջ: Ալէքսանդրը տուել էր նրան այդ նպատակով մի միլիօն րուբլի և հազար մարդ միշտ նրա տրամադրութեան տակ էին, որոնք ամեն

երկրներից հազւագիւտ կենդանիներ և բոյսեր էին հաւաքում նրա համար։

Փիլիպպոսի մահից յետոյ Արիստոտէլը մնաց Ալէքսանդրի մօտ, մինչև որ նա մասնակցեց ասիական մեծ արշաւանքին, և այն ժամանակ փիլիսոփան մեկնեց դէպի Աթէնք։ Աթէնքում նա բաց արաւ իր փիլիսոփայական դպրոցը՝ Լիցէոնում, ուր սաղարթախիտ այգիներում ճեմելով սովորեցնում էր իր ունկնդիրներին, որոնք խմբով նրա ետևից գնում էին։ Առաւօտեան նա դասախօսում էր այն աշակերտներին, որոնք արդէն ծանօթ էին իմաստասիրութեան սկզբունքներին, իսկ երեկոյեան ուսուցանում էր նոր սկսողներին։ Այդ ժամանակ նա յիսուն տարեկան էր։ Այդպիսով մենք տեսնում ենք, որ Արիստոտէլը շատ վաղ սկսեց սովորել և ուշ սկսեց սովորեցնել. այդ էր նրա գերազանց առաւելութիւնը։

Աթէնացիք սաստիկ զրգռւած էին մակեդոնացիների դէմ, ուստի նրանք հետամուտ էին Արիստոտէլին, որ խոհեմութեամբ թողեց Աթէնքը, որպէս զի նորից տեղի չունենայ ամօթալի եղեռնագործութիւն, որպիսին էր մեծ Սոկրատի թունաւորումը։ Նա գնաց Խալկիդա, ուր և վախճանւեց 322 թւին Ք. Ծ. առաջ։ Արիստոտէլի մարմինը փոխադրեցին Ստագիրա և վրան ճոխ դամբարան կառուցին, որ բաւական երկար գոյութիւն ունեցաւ. սակայն անձեռագործ մահարձանը՝ մեծ միտքը՝ անմահացրեց Արիստոտէլին։

Արիստոտէլն իր կտակի մէջ ցոյց է տալիս թէ քնքոյշ ամուսնական և ծնողական սիրտ է ունեցել. յիրաւի նա միշտ քարոզում էր, որ տղամարդը կանանց գրաւիչ լինելու համար, պէտք կանանցից փոխ առնի նրանց շնորհալի ձևերը և քնքշութիւնը. իսկ կանանց հրապուրիչ լինելու համար խորհուրդ է տալիս մի քիչ առնացի լինել։

Մի հին մատենագիր ասում է. «Սողոմոնի օրերում իմաստութիւնն իր ձայնը բարձրացնում էր հրապարակներում, բայց լսող չըկար։ Այսպէս շարունակւում է մինչև այսօր։ Հրապարակներում տեղ չունի իմաստութիւնը։ Իմաստութիւնը կարիք ունի խաղաղ խորհելու. իսկ հրապարակներում և փողոցներում լինում է միայն աղմուկ և շփոթ։ Արիստոտէլն ատում է անգիտակից ամբոխը և սա էլ ատում է Արիստոտէլին։ Ծայրա-

յեղ կարծիքները, սուր լեզուով արտայայտուած, ամբոխի մէջ մեծ յաջողութիւն ունին»։

Արիստոտէլը ազնիւ, անկախ և պարզ կերպով ապրեց աշխարհի վրայ վաթսուն երեք տարի. Նրա կեանքը չունի մեծամեծ արկածներ և շահատակութիւններ. մտային գործիչներին վայել է այդպիսի խաղաղ անդորր կեանքը, վասնզի նրանց մտքի արգասիքները ոչ այնքան աւելի ներկային, այլ ապագայ դարերին և սերունդներին պիտի բախտաւորացնեն։

Արիստոտէլն այնքան էր կենացում մարդկանց, որ միայն նրանց ճանաչէր և հասկանար, բայց նա չէր խառնւում ամբոխի մէջ, չէր հետաքրքրւում առօրեայ մանր շահերով, այլ մեկուսացած աշխատում էր գիտութիւններով, որոնց զարգացման համար անհրաժեշտ է անդորր խաղաղութիւն։

Նա հաւատարիմ և սրտակից մտերիմ ընկեր էր, քաղցր ամուսին էր և առհասարակ սիրում էր մարդկանց ու նրանց բարի ցանկանում, թէպէտ զրպարտութիւնը և բամբասանքը հետևում էին նրան ամբողջ կեանքում։

Ն. Ա. Ն.-Ա.

(Կըշարունակւի)



ԶՒԱՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

—

Առաջ. Արամ Մեհրաբեանի

3) Այն ինչն է,
Տակը տախտակ, վերև տախտակ,
Մէջը ցախ,
Մի մարդ վրէն նստած՝
Ոտքերը կախ։

—

Առաջ. Դ. Ե. Ձ.-ի

5) Թէպէտև շատ փոքրիկ եմ,
Բայց քեզ անհանգիստ կ՚ընեմ,
Գլուխս ոտքիս տակը տար՝
Որ քեզ լինիմ օգտակար
Սիրէ, գգուէ, փայփայէ,
Համով հոտով ճաշակէ։

—

Պատմական հանելուկ

—

Առաջարկութիւն Փառնակեցու

5) Մեզանից 2000 տարի առաջ մի երկրում թագաւորում էր Ռոբերտ անունով մի մարդ, ծագումով Պարթև։ Ռոբերտը շատ զօրեղ թագաւոր է լինում. ամեն մի թագաւոր «Ռոբերտ»

անունը լսելիս սարսափում է եղել. շատ երկիրներ է նուաճում, շատ ազգեր է հպատակեցնում։ Մենակ չըկարողանալով թագաւորել այդքան ընդարձակ երկրների վրայ, իր եղբայր Մելքիսեդեկին թագաւոր է նշանակում մի իրան հպատակեցրած թագաւորութեան վրայ։ Մելքիսեդեկը թագաւոր դառնալով, մայրաքաղաք է դարձնում Սիմանակլան (Սիմանակլայ). ամենից առաջ կամենում է իմանալ դրանց ծագումը, նախնի թագաւորների կեանքը, և նախարարական տոհմերի անուններն ու ծագումը և իրանց պատկանելիք կալուածները։ Այս պատճառով նա Անանիա անունով մէկին ուղարկում է Բերլին (իր եղբօր թագաւորութեամբ), որպէսզի այնտեղի գրադարանի գրքերից կարողանայ տեղեկութիւններ հաւաքել իր երկրի ժողովրդի ծագման մասին, սկսած առաջինից մինչև իր ժամանակները թագաւորների, իշխանների և վերոյիշեալների մասին։

Անանիան այնտեղ մի ձեռագիր է գտնում, որ պարունակում է եղել զանազան ազգերի պատմութիւններ, ի միջի այլոց և այդ ազգի պատմութիւնը, այդ ձեռագրից քաղում է այդ ազգի պատմութիւնը ու բերում յանձնում Մելքիսեդեկին։

Մեր խօսքը գլխաւորապէս Անանիայի մասին է և լինելու է։

Անանիայի գտած ձեռագիրը մի առ ժամանակ անյայտ է մնում և X դարում մի մարդ այդ ձեռագրից օգտւում է և իր գրուածքում յիշում է, որ ինքը օգտուել է Անանիայի պատմութիւնից։ Այդ վերջինի գրուածքը երկար տարիներ պահպանւում է, իսկ Անանիայի ձեռագիրը դարձեալ անյայտութեան մէջ է մնում։ V դարից սկսած X դարի մարդու գրածը ընկնում է անաչառ քննադատութեան տակ, մի քանի անձնաւորութիւններից ստւում է, մի քանիսից պաշտպանւում. վերջապէս V դարի վերջերքում Աւստրօ-Ունգարիայի, գլխաւոր քաղաքում Ամասիա անունով մէկը գտնում է Անանիայի ձեռագիրը և սկսում է ուսումնասիրել։

Այս համառօտ պատմութիւնը ձեր առաջ դնելով՝ պէտք է

ասեմ որ պատմութիւնը անփոփոխ է, իսկ անունները փոփոխուած. և դուք այս անուններից ամեն մէկի սկզբնական ձևը վերցնելով՝ այնպէս պէտք է (բացի Աստրօ Ունգարիայից, որը պէտք է մնայ այնպէս, ինչպէս կայ) դասաւորեցէք քառակուսիների մէջ, որ ձախ կողմից վերևից ներքև և աջ կողմից նոյնպէս վերևից ներքև կարդալով՝ ստանանք բուն Անանիայի անունը:

—

6) Առաջ. Լոռիկի.

35	35	35	35	35	35
41	92	92	92	92	41
41	35	92	92	92	41
41	35	35	35	35	41
41	92	92	92	92	41
35	35	35	35	35	35

Ջնջել սրանցից 11 թիւ, այնպէս որ առաջին անգամ ստացուի մնացած 25 թւերի գումարը՝ 1114, իսկ երկրորդ անգամ 1,308:

ԱՂԲԻՒՐ

Բ. ԲԱԺԻՆ

ՏՂԱՆԵՐԻ ՉՈՐՍ ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՎԱՐՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

—

Ես ցանկանում եմ իմ որդին լաւ մարդ դառնայ, ապահով լինի, իր ընտանիքին, որդիներին օգնէ, շատ անգամ լսում է ծնողների բերանից այս ցանկութիւնները, իսկ ոմանք աւելի հեռուն գնալով աւելացնում են, որ իր ժողովրդին, հասարակութեան, գրականութեան պիտանի լինի եւայլն եւայլն։ Ահա այս և սրա նման ցանկութիւններին հասնելու համար, նրանք աշխատում են որդոցը կրթութիւն տալ, գրել-կարդալ սովորեցնել, ուսուցիչ վարձել, դպրոց ուղարկել և վերջ, Իսկ թէ մինչև այդ գրագիտութեան աստիճանին հասցնելը իրանք ինչ պարտաւորութիւններ ունին, ինչ են անելու և արդեօք այդ բանի համար նախապատրաստել են, կամ գիտե՞ն իրանց տղի ժառանգական, մտաւոր, ֆիզիքական յատկութիւնները, նրանց տեմպերամենտը. կամ թէ ինչպէս պէտք է նրանց հետ վարուել. ինչպիսի հանդամանքների, շրջանի և ընկերների մէջ գնել, որ հէնց մանկական ամենամատաղ, ամենաթարմ ու ամենազօրեղ ֆիզիքական, մտաւոր աճեցման ժամանակը օրհնաբեր հետևանքներ ունենայ և նրանց մտաւոր յատկութիւններին դրական, հաստատ ուղղութիւն տրուի։ Այդպէս շարունակելով՝ անշուշտ նրանք որոշ ուղղութեամբ առաջ ընթանալով բնաւորութեամբ հաստատ, համոզմունքով անյողդողդ մարդիկ կըլինին. մարդիկ՝ որոնք կենսամարտի համար անհրաժեշտ են։

Այդ կողմից դժբախտաբար մեր դիտողութիւնները շատ անմխիթար են ոչ թէ միայն հարուստ և միջին դասակարգի համար, այլ նոյն իսկ իրանց ինտելիգենտ համարող մարդիկ և՛ այդ բանի համար շատ թեթև ու երկրորդական աչքով են նայում։ Թէև այս բաւական չէ, նրանք դրա մասին անգամ այնպիսի խակ գաղափար ունին, որ միմիայն ապշել կարելի է և իրանց օրինակով ժողովրդին բացասական օրինակ են լինում։ Ի հարկէ, այսպիսի դէպքերում դաստիարակութեան մասին խօսք անգամ չի կարող լինել. այն ինչ մենք կենդանական աշխարհի վրայ նայելիս համարեա նոյն բաները կարող ենք տեսնել, այսինքն որդու մասին մտածել, մեծացնել, սովորացնել որս անել, կերակուր ճարել, թռչել և այլն։ Ուրեմն էլ ո՞ւր մնաց մեր մտաւոր բարձր ընդունակութիւնները, առաջ գնացած մարդկային կուլտուրան՝ երբ մեր կեանքում շատ դէպքում միևնոյն նահապետական, անասնական վիճակն ենք տեսնում։ Ահա այս թշուառ դրութեանը մասամբ օգնելու համար, յարմար համարեցինք զանազան հեղինակներից, մանաւանդ Բ. Հիւլիգի և Ա. Ֆուլէի, աշխատութիւններից օգտուել և կազմել առաջիկայ յօդուածը՝ վստահ լինելով, որ նա շատ ծնողների, խնամատարների, նոյն իսկ ուսուցիչներին առաջնորդ կարող է լինել։ Այստեղ ոչ միայն տեմպերամենտի խարակտերիստիկն է առաջ բերւում, այլ և թէ ինչպէս պէտք է տղաների հետ վարուել, առաջնորդել և ուղղել. դրանից յետոյ մենք անցնելու ենք հասակաւորների տեմպերամենտին, որով պարզ կըլինի թէ տեմպերամենտները մանկական հասակից սկսած մինչև արբունքի հասնելը ի՞նչ փոփոխութիւնների է ենթարկւում, ի՞նչ շրջաններով անցնում, ի՞նչ ազդեցութիւն է թողնում դաստիարակութիւնը, ընկերական, հասարակական շրջանները և այլն։ Որովհետև մեր նպատակն է այդ ամենը ընթերցող հասարակութեանը դիւրամատչելի և որպէս գործնական ուղղեցոյց անել՝ դրա համար աւելորդ համարեցինք տեմպերամենտի ժառանգական, նրա հոգեբանական ու գիտա-

կան նշանակութեան մասին երկար ու բարակ կանգ առնել, այլ բաւականացանք համառօտ կերպով նրա էական բացատրութիւններով, իսկ դրա փոխարէն ներկայացնել փաստերը օրինակներով ու նրանց հետ վարուելու կերպը, ճիշտ այնպէս՝ ինչպէս ինքը Իւալդը մեծ մասամբ դրա վրայ ուշ է դարձրել։

—

Մանկանը կրթել, դաստիարակել, դա մանկավարժութեան գործ է, իսկ նրա հիմնական օրէնքները միշտ և ամեն տեղ միևնոյնն են. քանի որ նա մի կողմից հիմնուած է հոգեբանութեան վրայ՝ որպէս զի մանկան զարգացման ճիշտ օրէնքներով ընթանան, միւս կողմից բարոյագիտութեան, որով կորոշուեն թէ նրանց սանիկին ուր են առաջնորդում և ինչ բանի համար պատրաստում։ Նոյնպէս ճշմարիտ է այն՝ որ այս ընդհանուր հիմունքները ամեն դէպքի համար անվնաս կարելի է գործադրել, որովհետև նա միշտ ի նկատի ունի մանկան առանձնայատկութիւնները և ըստ այնմ էլ վարւում է։ Ինչպէս օրինակ՝ այլ կերպ է լինելու տղայի դաստիարակութիւնը, այլ կերպ աղջկանը, այլ կերպ կենդանի աշխոյժ մանկանը, այլ կերպ լուրջ, ծանր տղայինը և այլն։ Տղայի հետ վարուելն ու ձևը որոշելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ի նկատի ունենալ արտաքին հանգամանքները, մանկան հասակը, մարմնական կազմուածքը, նրա մտաւոր ու բարոյական ժառանգական յատկութիւնները, սեռը և այլն։ Բացի սրանցից կան ուրիշ ֆակտորներ, որոնք դաստիարակութեան գործի և նրա տեսակի վրայ ազդում և որոշում են։ Առայժմ դրանց ամենքի մասին առանձին առանձին խօսելը մեր նպատակից դուրս լինելով՝ բաւականանում ենք դրանց միջից նշանաւոր հարցերից մէկի, այսինքն **տեմպերամենտի** մասին խօսելով։

Ս. Չիլինգարեան

(Կըշարունակի)

ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԷՍ ԿՐԹԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

II.

Ինչպիսի տիպ է դուրս գալիս տղայից կամ աղջկանից, ինչպիսի ձևի են ձուլւում և ընդհանրապէս նրանցից ինչ է դուրս գալիս—այդ, ի հարկէ, հազար տեսակ պայմաններից և չընախատեսնւած դէպքերից է առաջ գալիս, բայց անկասկած է միայն մի բան. ինչպէս փոքր գոջին մեծանում և խոզ է դառնում, առհասարակ փոքր անասունից—մեծը, այնպէս էլ վատ դաստիարակւած և վատ ուղղութիւն տւած երեխայից Մոլչալին, Նոզդրև է դուրս գալիս, լաւ դէպքում ուղղակի խրտւիլակ, կամ բոլորովին անպէտք արարած, իսկ վատ դաստիարակւած աղջկանից—դատարկ, անտանելի, պտուտակը չեռ քանդած տիկին. լաւ դէպքում—քիսէից կարած օրիորդ, մի խղճալի անպէտքութիւն։ Բայց ինչո՞ւ անպատճառ խրտւիլակ կամ տիկին, կըհարցնի քիչ դժւար հասկացող ընթերցողը։ Ինչո՞ւ աւելորդ մարդ, այլ ոչ հասարակութեան համար, օգտաւէտ և աշխատող անդամ։ Իսկ նրա համար, կըպատասխանեմ ես, որ իւրաքանչիւր տունկի համար յայտնի հող և աճելու համար համապատասխան պայմաններ պէտք է լինին, իսկ որովհետև մեր տունկի համար, շատ դէպքերում այդպիսի հող գոյութիւն չունի, հետևապէս չի էլ կարող աճել։

Ես արդէն վաղուց եմ լսում, որ ինձ յանդիմանում են պեսսիմիստութեան մէջ, յանդիմանութիւն նրանում, որ ծնողների, մանկավարժների, ընդհանրապէս մեր հասարակութեան վրայ նայում եմ «այնպիսի խաւար ակնոցով, որ մարդ զարհուրում է»։ Չըգիտեմ ինձ մեղադրողները ինչպիսի ակնոցներով են նայում (պէտք է կարծել, որ նրանք վարդագոյն ակնոցներ են կրում), բայց ինչ վերաբերում է այս տողերը գրողին, անկեղծութեամբ խոստովանւում եմ, որ «մայրենի պատկերները» ինձ օպտիմիստութեան առիթ չեն տալիս, այլ, ընդհակառակը, շատ տխուր և անմխիթար մտքերի են տանում։ Ինձ արդէն սարսափելի են մեր երեխաները, որոնք տաս տարեկան հասակում գաղտնի յանցանքի հետ ծանօթ են, քսան տարեկան հասակում անցունցքի են նմանում, իսկ քսանըհնգում,—ծանօթանալով «ծննդագործութեան հրաշալիքների» հետ, իրանց յոգնած են զգում, ջղերից թուլա-

ցած և գործնական կեանքի համար միանգամայն անպէտք, որը մի անտանելի լուծի պէս նրանց ծանրացնում է։ Հետաքրքիր է իմանալ, ինչ օգտակար բան կարող են տալ այդ ջղային, պտուտակը չետ քանդած, ժամանակից շուտ մաշուած, կեանքից կշտացած երիտասարդ ծերունիները։ Միակ բանը, որով նրանք կարող են երկրիս երեսին իրանց գոյութիւնը յիշատակել—դա հասարակութեան համար իրանց նման վնասակար դեկադենտներ աշխարհ հանելն է, որովհետև յայտնի է, որ կենդանիների ցածր տեսակները շատ պտղաբեր են, կարելի է յուսալ, որ ճիւրաստենիկների և ծոյլ մարդկանց սերունդը բազմաթիւ կըլինի…

Փաստերը անկանոն կերպով սարքելու մէջ դատարկ կերպով յանդիմանելու և հնացած ֆրազներ կրկնելու փոխարէն, ամենից լաւ, գործնական և նպատակին մօտ կըլինէր, եթէ պարոնայք մեղադրողները ցոյց տային մեզ—սկեպտիկներիս այն մխիթարական և ուրախալի երևոյթները, որոնք մեր հայեացքները և եզրակացութիւնները պէտք է հերքեն։ Թող այդ պարոնները փաստերով ապացուցեն, որ մեր ընտանեկան և դըպրոցական կրթութիւնը լաւ, կանոնաւոր և նպատակայարմար է գընում, որ մեր ընտանիքում թագաւորում է հաշտութիւն, սէր, համաձայնութիւն, իրանց բարձր պարտականութիւնների համար առողջ հասկացողութիւններ, որ ծնողները սովորեցնում են. և ոչ թէ սովորեցնում են, այլև իրանց երեխաներին ազնուութեան, աշխատասիրութեան, համոզմունքների և մայրենի երկրի օգտին անդադար աշխատանքի դիմացկունութեան օրինակներ են ցոյց տալիս։ Ո՞ւր են մեզնում խոհեմութեամբ սիրող, լայն և բազմակողմանի կրթուած մայրեր։ Ո՞ւր են այդ հայրենիքի հայրերը, որոնց մենք պէտք է մեզ օրինակ վերցնենք։ Ամենահմուտ օպտիմիստները, եթէ նրանցում բարեխղճութեան գէթ մի կաթիլ կայ, այդպիսի օրինակներ երբէք չեն ցոյց տայ մեզ, այն հասարակ պատճառաւ, որ չըկայ, այսինքն չըկայ ընդհանուր կանոնների մտքով, այլ ոչ սակաւ բացառութեան մըտքով, որը միշտ և ամեն տեղ կարելի է գտնել…

Այս դէպքում մի քանիսներին իբր արդարութիւն, և եթէ կամենում էք, մխիթարութիւն (թէև շատ վատ) կարող է ծառայել այն, որ ընտանիքի այսպիսի ճայճայումը, ոչ թէ միայն մեզանում է պատահում, այլ արևմտեան Եւրոպայի բոլոր պետութիւններում։ Վերցրէք, իսկապէս և ծանօթացէք արևմուտքի գիտնականների բազմաթիւ աշխատութիւնների հետ, որոնք ջղային դարու, կնոջ ժամանակակից կրթութեան, հօ-

գու բժշկութեան, ընդհանուր այլասերութեան և այլ մասին են խօսում։ Դուք կըսարսափէք այն տխուր պատկերից, որը ձեր երևակայութեան մէջ կըպատկերանայ. ամենացածր տեսակի բաւականութիւնների յետևից ագահութեամբ ընկնելը, դէպի առաջնակարգ նշանակութիւն ունեցող հարցերը անտարբերութիւն, զարմանալի, քաջահմտութեան հասած նրբացած անբարոյականութիւն և, ինչպէս դրա արդիւնքը և հետևանքը, ամուսնութիւնների, ծննդաբերութեան թւի, ազգաբնակութեան պակասիլը։

Բոլոր այս և սրա նման ժամանակի նշանները, որոնք չափազանց անհանգստացնում և զբաղեցնում են լուրջ մտածողներին, ժամանակակից կեանքի հետազօտողներին մի տխուր եզրակացութեան են բերում, որ 19-դարու վերջը պատմութեան մէջ պէտք է նշանակւի, ինչպէս նրբացած անբարոյականութեան, ջղային սիստեմի սաստիկ խանգարման դար, լի սանձարձակութեամբ և և ամենաանմխիթար պեսսիմիստութեամբ։

(Վերջը միւս անգամ)

ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԷՋ

Եւրոպական մի լրագիր պատմում է հետևեալ բնորոշ դէպքը. Սովորական ճնճղուկների մի բոյն աւերուած էր և միջի դեռ նոր թուչել սովորած ճնճղուկիկները թափուած էին գետնի վրայ։ Նրանց այդպիսի մի նեղ դրութիւնից օգտուելով՝ չարանենգ ագռաւը մօտենում է և յափշտակում ճընճղուկներից մէկին։ Երեքն ազատւում են։ Ազատուածներից մէկին, հէնց այնպէս՝ փորձի համար, տանում են և դնում մօտակայքում եղած ագռաւի բնի մէջ։ Շատ կարելի է այդ բոյնը պատկանելիս լինէր ճնճղուկին յափշտակող ագռաւին, ով գիտէ։

Այդ բոյնը կատարեալ օջախ էր։ Այդտեղ էին հայրը, մայրը և իրանց ագռաւիկները։ Թէ մեծերը և թէ փոքրերը՝ ոչ մէկն էլ մի որևէ չարիք չըպատճառեցին բնի մէջ դրած ճնճղուկին, որդեգրելով նրան։ Չընայելով այդ բանին, այնուամենայնիւ, նրանք կերակուր չէին տալիս նրան, կամ աւելի ճիշտը, միայն մի անգամ հասակաւոր ագռաւը կերակրեց ճնճղուկին, և հաւանական է, որ այդ պատահմամբ լինէր։ Իսկ ինչ վերաբերում է ճնճղուկի ծնողներին, նրանք յընթացս երկու օրւայ, չէին հեռանում բնի շրջականերից և յարմար եղած ժամանակ՝ երբ հասակաւոր ագռաւները հեռացած էին լինում, կերակուր էին բերում իրանց ճուտի համար, և երբէք չէին սխալւում կերակուր տալու մէջ։ Երրորդ օրը ճնճղուկիկը արդէն այն-

քան ույժ էր զգում իր մէջ, որ կարողացաւ դուրս պրծնել այնտեղից: Հետաքրքիր էր տեսնել, թէ ինչպէս ագռաւները, որոնք աւհասարակ խիստ հետևում են ճնճղուկներին, իրանց միանգամայն հեռու պահեցին իրանց որդեգրութեանը յանձնած ճնճղուկին չարիք պատճառելու մտքից և նրա փախչելու դէպքում: Ըստ երևոյթին, սրանից կարելի է եզրակացնել, որ միաբնակչութիւնը կենդանիներին՝ միմեանց վերաբերմամբ, դարձնում է ընտանի և անձեռնմխելի:

Իսկ մարդի՞կ... Տէրը ազատ է ճնճղուկի դերում եղած որբերին խնամատարների ձեռքից:

Գ. Բ.

ԼՈՒՐԵՐ

Կովկասեան նկարիչների ընկերութիւնը որոշել է բաց անել Թիֆլիսում առաջիկայ մարտի 28-ից պատկերահանդէս: Բացի մասնագէտ նըկարիչներից, կըմասնակցեն և սիրողներ: Հանդիսի կարգադրիչ ընտրուած է պ. Գ. Բաշինջաղեան:

—

Նշանաւոր դաշնակահար պ. Վահրամ Սվաճեան, որի մասին Տարազում քանիցս տուել են տեղեկութիւններ, այժմ Թիֆլիսում մեզ հիւր է իր մօր՝ տիկին Մարիամի հետ, որը մանաւանդ յայտնի է հայերիս իր գրական աշխատութիւններով:

Պ. Վահրամ Սվաճեան Թիֆլիսում և Բագւում կըտայ մի երկու կոնցերտ: Մինչև այժմ երաժշտապետը իր նուագահանդէսները տուել է Պարիզում և Լոնդոնում, հմայելով իր ունկնդիրներին: Եւրոպական մամուլը մեծ գովեստով է խօսել պ. Սվաճեանի մասին:

—

Վարդանանց տօնը հայաբնակ գաւառներում կատարուել են թատրոնական և գրական երեկոյթներով: Մեր թղթակիցները նկարագրում են բարեկենդանային այդ խրախճանքները, ոմանք դատապարտելով հասարակութեան անտարբերութիւնը, ոմանք դրւատելով նրանց ինքնաճանաչութիւնը: Տարւայ ընթացքում մի երկու օր նշանաւոր օրերում հայի ցոյց տըւած բարենպատակ գործերին համակրութիւն, կամ հակակրութիւն մի առանձին փաստ չէ, որ նա անտարբեր է դէպի հասարակական գործը, կամ սաստիկ մօտ նրան:

Դպրոցական

Նիւթական պակասութիւնը համարեա սպառնում էր Շուշու ռէալական դպրոցը փակելու: Բագւաբնակ շուշեցիները խոստացել էին օգնութեան հասնել այդ դպրոցին, իրանք կառուցանելով նրա համար յատուկ շէնք: Պատրաստել էին յատակագիծ և արդէն հանգանակութիւնը կամենում էին բանալ: Թիֆլիսաբնակ շուշեցի պ. Գրիգոր Առաքելեան ի նկատի ունենալով, որ իր ծննդավայրը ուրիշ շատ անհրաժեշտ կարիքներ էլ ունի, կանգնեցնել տուաւ այդ հանգանակութիւնը, խոստանալով 100,000 ռ. Շուշու ռէալական դպրոցի շէնքը կառուցանելու համար միայն ինքը նուիրել: Այժմ յատակագիծը նորից ներկայացրած է մասնագէտների քննութեան և շուտով ձեռնամուխ կլինին դպրոցի շէնքի կառուցման: Պ. Առաքելեան վճռել է հնար եղածին չափ փութով սկսել և աւարտել այդ տաճարը:

Գրականական

—

Հ. Նիկողոս Տէր-Աւետիքեան արդէն կազմել է Տաթեւի ձեռագիրների ցուցակը: Կան բաւական նշանաւոր ձեռագիրներ. բոլորն 200 հատ է, որից 50 Աւետարան. 6 Աւետարան մագաղաթեայ գեղարուեստական սքանչելիք են, 30 հատ բանասիրական, մնացեալը կրօնական, իսկ 30 հ. խոնաւութիւնից բոլորովին անպէտքացած. կայ մի քերականութիւն մագաղաթեայ Գրիգոր Մագիստրոսի, և գրականութեան մէջ քանի մի անյայտ կտորներ. կայ 10 ձեռագիր Յայսմաւոր, մէկը երևելի մագաղաթ և այլն։ Անշուշտ հայր Տէր-Աւետիքեանի այս կարևոր գործը աւելի կընհանդիսանայ փրկելու թանգագին ձեռագիրները խոնաւութիւնից։

Այլ եւ այլք

—

Անգլիայում, մի ագարակատէր, փորձ փորձեց որբ մնացած գառնուկներին յանձնել կովի խնամատարութեանը: Եւ փորձը բաւական յաջող եղաւ: Կովը ոչ միայն մօտ թողեց գառնուկներին, այլ եւ սկսեց շոյել, փայփայել նրանց: Գառները ծծեցին կովի կաթը, կերան, կշտացան, եւ այնուհետեւ պարբերաբար, նրանց մօտեցնում էին կովի ծծերին ու կերակրում: Փորձը ցոյց տուեց, որ կովի կաթն էլ նրանց կարող է բաւականութիւն տալ այնպէս, ինչպէս ոչխարինը:

ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Ն. Նախիջեւան, Աsr. — Կաշխատենք ձեր խնդիրը կատարել։

Ալեքսանդրապոլ. Գ. Մ.—Անցեալ տարուայ պրէմիայից՝ Հայրենասէր Իֆիգենիա պատկերից, այո ունինք։ Բայց վաճառւում է հատը 5 ր., Աղբիւրի և Տարազի 99 թ. բաժանորդների համար 2 ր.։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 5-го марта 1899 г.

Типографія К. И. Мартиросіанца, Орб. ул д № 1—2.

Շարունակւում է 1899 թ. բաժանորդագրութիւնը

X ՏԱՐԱԶ X

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտան. ընթերցանութեան համար

Հրատարակւում է նոյն ուղղութեամբ, ծրագրով եւ աշխատակից-ների մասնակցութեամբ:

ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1—3 թերթ տարեկան 47—50 №№:

Տարազի պրէմիան է ԱՆՏԻԳՈՆԱ եւ ԻՍՄԷՆԱ, Հին Յունաստանի առասպելներից խրոմո-ոլէօգրաֆիական շքեղ պատկեր.

Ն Պ Ա Տ Ա Կ

ՏԱՐԱԶԸ ԱՂԲԻՒՐԻ հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, եղբայրսիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Գեղարուեստ եւ գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական դրուածքներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ Թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Յօդուածներ եւ այլն: Ֆելիետօն, ծաղր, առած եւ կատակ: Շախմատ եւ այլ խաղեր, Րեբուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ:

Առաջիկայ 1899 թ. համար ի միջի այլոց խմբագրութեանս պորտֆէլում պատրաստ են Տարազի համար Ալֆոնս Դոդէի ԱՆՄԱՀԸ և Ժորժ Օնէի ԿԱՄՔԻ ՈՅԺԸ—պատկերազարդ վէպեր, որոնց կլիշէները ստացւած են Պարիզից և արդէն մեր պահարանումն են: Տաճկա-Հայաստանի կեանքից՝ ԱԼՄՕ, տաճիկների կեանքից ՎԻՔԵԱԼԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ. ինքնուրոյն վէպեր և մի շարք գիտական լուրջ յօդւածներ, որոնց թւում ՐԱՅՍ, Խսլամ, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները. Խ, Աբովեան. Աղբիւրի համար՝ Արիստոտել. ՇԻԼԼԵՐ, Վալտէր Սկոտ, 2. Դիկենս, Գուտենբերգ, Րիշելիօ, Պեստոլոցցի, Պռժեւալսկի և այլն:

Բացի այն, որ Տարազը ընթերցանութեան շատ նիւթ է տալիս բելետրիստիկայից, պակաս էջեր չեն զարդարւում և կրիտիկական յօդւածներով: Գեղարւեստն ու տնտեսագիտական, հասարակական գիտական յօդւածները քաղւում են և կազմւում հաւատարիմ աղբիւրներից մեր մասնագէտ աշխատակիցների ձեռքով: ԱՂԲԻՒՐԸ ներկայ նոյեմբերից լոյս է տեսնում ընդարձակ ծաւալով: Առանձին հոգս է տարւելու, որ ԱՂԲԻՒՐԸ իր ըստ ամենայնի օգտակար և շքեղ բովանդակութեամբ ամեն հայ ծնողից և դաստիարակից ճանաչւի իբրև ամենալաւ բարեկամ և ընկեր հայ մանկան և պատանու:

ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 ՌՈՒԲ. (պրէմիայով կամ 30 ֆր.) **7** ր. (արտասահման 10 ր.

Հասցէն՝ **ТИФЛИСЪ** редакція иллюст. жур. **ТАРАЗЪ** կամ Tiflis (Caucase):
Réd. du jour. Taraz.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Թիֆլիսի ժողովարանում

Երեքշաբթի, մարտի 9-ին, կըկայանայ

ԱՐ. ԿՈՍՏԱՆԵԱՆԻ

ԿՈՆՑԵՐՏԸ

Մասնակցութեամբ տ. Ֆերտիգի, պ. պ. Տալէնտի և Վէյմանի: Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ պ. Սուգանաջեանի մագազինում:

Սկիզբն է ժամը 9-ին:

ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Յովհաննէս Թումանեանց

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ և ՊԱՏՄՈՒԱԾ

Փառակազմ գինը 50 կ.

ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Գ. Դուշեանց

ԵԶԻԴԻ ՄԿՐՏՉԵՆՑ ՏՈՒՆԸ

Փառակազմ գինը 50 կ.

Մամուլի տակ է

Վ. Փափազեանց

Աղբիւրի Մատենադարան

I

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐԻ ՎՐԱՆՆԵՐՈՒՄ

II

ԱՌԻՒԾԻ ՄԱՀԸ

Փառակազմ գինը 50 կ.

Շարունակւում է

«ԱՂԲԻՒՐ» - «ՏԱՐԱԶԻ»

բաժանորդագրութիւնը

Աղբիւր *տարեկան* . . . . 3 ր.
Տարազ „ . . . . . 6 „
Աղբիւր Տարազ *պրէմիա* . 10 „
Տարազ, *պրէմիաներ,*
Աղբիւր, Մատ. . . . . . 12 „

ՏԱՐԱԶԻ ՕՐԱՑՈՅՑ—ԱԼՄԱՆԱԽ

Փառահեղ կազմով եւ ընտիր նիւթերով!

ԳԻՆԸ 30 Կ.

ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Վեց փառակազմ գրքոյկ և մի փառակազմ ալմանախ-օրացոյց, գինը **3** ր.: *Աղբիւր-Տարազ* միևնոյն հասցէով ստացող բաժանորդների համար **2** ր.

Տարունակւում է 1899 թ. բաժանորդագրութիւնը

XVII ԱՂԲԻՒՐ XVII

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար։

Կրթատարակի նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ։

Աղբիւրի պրէմիան է ԱՆՏԻԳՈՆԷ եւ ՔԴԻՓՈՍ, Հին Յունաստանի առասպելներից խրոմո-օլէօգրաֆիական շքեղ պատկեր.

ՆՊԱՏԱԿ. Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։

Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր։

ԾՐԱԳԻՐ Ա. Մանկական բաժին. Մանրավէպ, Զրոյց, Հէքիաթ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն։ Գիտութիւն և արւեստ։ Նոր լուրեր։ Այլ և այլք։ Զւարճալիք։ Մանկական, Ֆրէօբէլեան, շախմատի և այլ խաղեր. Րեբուսներ, Թւաբանական խնդիրներ. Անեկդոտ. Հանելուկ, Երգեր նոտաներով։

Բ. բաժին. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ նամակներ և տեղեկութիւններ։ Առաջարկութիւններ։ Խորհուրդներ։ Մատենախօսութիւն և Նոր գրքեր։ Խառն լուրեր։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը 3 ր. արտասահման 5 ր. (15 ֆր.)

Պրէմիայով 4 ր.

Խնդրում ենք Աղբիւր-Տարազին բաժանորդ գրւել ցանկացողները անպարեն փութով ստորագրւել, որպէս զի անցեալ 1898 թւականի նման նոր բաժանորդ գրւողները չզրկւեն Աղբիւր-Տարազի առաջին №№-ից։

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. „Агбюръ" Tiflis. Caucase. Réd. du jour. «Agboür».

№ 3 ՄԱՐՏ 1899

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ № 3.

Ա. բաժին

Փոքրիկ երգիչը (*պատկեր*)։ Գիտեմ դու էլ ես...։ Երբ Նորեկ... (*ոտանաւոր*) *Նորենց*։ Արագիլներ (*Հեքիաթ Ընդեր-սէնից*)—*Ջ. Տէր-Գրիգորեան*։ Անտեղի հպարտութիւն (*Գուստաֆսոնից*) – *Յով. Արաբաջեանց*։ Նախկին քրիստոնեաները (*բանաստեղծ.—Ն. Իւանովի*), *Խ. քահ. Փանեանց*։ Գարունը գիւղում (*պատկեր*)։ Արագիլներ (*գծեր նրանց կեանքից*)—*Ջ. Տէր-Գրիգորեան*։ Կախուած գողեր (*պատկեր*)։ Պարզ երկնքի անհուն դէմքից... (*ոտանաւոր*)—*Վ. Ն.*։ Տասկոպէկանոց—*թարգմ. օր. Մ. Մզգսեան և Խաստոյ*։ Գեղջկուհի (*պատկեր*)։

Կենսագրական

Արիստոտէլ. (*շարունակ.*)—*Ն. Ա. Տէր—Ա.*։

Օտար մօրաքոյր (*պատկեր*)։ Նմուշներ *բոյսերի և կենդանիների աշխարհից. I. Արմաւենի II. Թզենի—Ն. քահ. Նիկողոսեան*։

Զուարճալիք

Հանելուկներ, առաջարկութիւններ։ *Բացատրութիւն*։

Բ. *Բաժին.*

Տղաների չորս տեմպերամենտը (*շարունակ.*)—*Գ. Չիլինգարեան*։ Ընտանիքը որպէս կրթական հիմնարկութիւն. III. *փոխադր. Ռ. Յովհանջանեան*։ Մեծ մարդկանց մանկութիւնը—*Հ. Բ.*։ «Աղբիւրի» պատկերները։ Այլ եւ այլք։

«Աղբիւրի» պրեմիայի—Եդիպոս եւ Անտիգոնա—*նկարագրութիւնը (կազմի վրայ)*։

Յայտարարութիւններ

Փոքրիկ երգիչը